

ԹՈՉԻԿ

Հ. Պ. ԹԻՒՐՅԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԴԱՆ

ՆՈՐ ՍԱՐՍԱՎԻՓՆԵՐ

ԵՐԶՆԿԱՅ ԵՒ ՊՈԼԻՍ

Սարսափ սարսափի ետևից, կոտորած կոտորածի ետքից է, որ անում է սուլթանի կառավարութիւնը անհնայ կերպով. մորթում, սպանում են և սպանւած դիակը ենթարկում տանջանքների. ահա թէ ուր է հասել սուլթանական կառավարութեան պատրաստած մուսուլման ամբոխի մոլեռանդութիւնը։ Սուլթանի կառավարութիւնը մի բոպէ անգամ կանդ չէ առնում, նա ամենայն եռանդով շարունակում է իւր խժդժութիւնները։

Ահա երկու ամիս է և գեռ երգնկայի գաւառը ամրողովին գտնուում է պաշարման դրութեան մէջ, ահա երկու ամիս է, կամախի սարսափը շարունակաբար տեսում է անարգել կերպով.՝զօրքը ցրւած է ամեն կողմ, ամեն գիւղ ամեն անկիւն այրում-կոտորում են, աւերում-բռնաբարում են, ոչնչեց ոչինչ չէ ինայուում։ Կամախը ձեռքից գնում է, որրանում է, զգիւում իւր բնակիչներից և այդ անողը ոչ թէ համաձարակը, սովոր ու դաղթականութիւնն է, ոյլ սուլթանի կառավարութեան սուրը ու հուրը։ Գիւղեր են թալանում ու այրում, կանայք ու աղջիկներ են լլկում, մանուկներ են ենթարկում ամենագարշելի գործադութիւնների։ Նոյնին է կատարուամ և Թամզարայուում։

Եւ գեռ չդադարած կամախի, Թամզարայի սարսափները, այժմ էլ մենք ունինք մի երրորդը՝ Պոլիսնը։

Պոլիսը՝ օսմանեան պետութեան մայրաքաղաքը, եւրապական պետութիւնների դեսպանանիստ քաղաքը, բնակւած բազմաթիւ եւրոպացիներով և կրթւած բնակիչներով, այսօր մի կատարեալ մարդկային սպանդա-

նոց է ներկայացնում։ Փողոց չկայ, մի անկիւն-չկայ, որ արիւնոտւած չլինի, տաճիկ ամբոխը մօլլաների, սօֆտաների ու կառավարութեան այլ ագէնտների ղեկավարութեամբ ու դրդմամբ մի մոլեռանդ արշաւանք է սկսել հայերի գէմ և նրանցից հարիւրաւոներին անխնայ կերպով. սրի է անցկացրել, որը տեել է մի քանի օր. և օր չի անցել այդ տեղութեան ժամանակիցում, որ չկոտորէին, օր չէ անցել, որ հայի դիակը սօֆտաների ոտերի տակ չձմլւէր, օր չէ անցել որ հայի գանդը ջարդէր և մարմնը չյօշութէր, օր չէ անցել, որ Մարմարա ծովը հայի ջարդւած ու փշտած, յօշութած ու մասմաս եղած դիակ չհիւնկալէր։

Այս, ինչպէս Ասսունը, Կամախը, Թամզարան, Պոլիսն էլ մարդկային սպանդանոց էր դարձել՝ սպանում, ջարդում, ջախճախում էին անպաշտպան, անզէն ու անտէր հայ ժողովրդին, „հայի պաշտպանների“ աչքի առջե։

Հայի արիւն է, որ հոսում է, դիակներ է, որ քաշքառում էին փողոցներում։ Հայ ժողովուրդը գտնուում է ամբողջովին լշակերի տրամադրութեան տակ և սա գեռ չէ հագեցել, նա գեռ զոհ է պահանջում, նա գեռ արիւնածարաւ է և կոտորում, մորթում է։

Սարսափը ընդհանուր է. Պոլսոյ հայ ժողովուրդը յուսահատ ու անզէն փախչում է... բայց ո՞ւր թշնամին ամեն տեղ է և զինւած։ Նա չի ինայում, նա հըրձում, բերկում է իւր որսին տեսնելիս, և՝ մի գլուդակ, մի սրի հարւած հասցնում ու անպաշտպան զոհին գետին գլորում և ապա զւարձանում նրա անշնչացած մարմնով, նրա յօշութած դիակով... ահ, տը-մարդ թշնամի։

Այս երեակայութեան հազեւ մատչելի դժոխային տեսարանները կատարուում են օրը ցերեկով, տեսում են օրեր ու ամիսներ, և եւրոպական դիպլոմատիան՝ „հայածեանների պաշտպանը“ բաւականանում է մի պաշտօնական նօտա ներկայացնելով, իսկ սուլթանի արիւնախում կառավարութիւնը խոստանում է քննութիւն անել... Այս, քննութիւն անել։

Այս ծաղը է, այս մի գժոխային հեգնութիւն է: Մորթում են, աւերում են, առանց մի բոպէ կանգ առնելու, մինչդեռ իրեն մարդկային իրաւունքների պաշտպան յորջորջող դիպլոմատիան և մամուլը ընդհանրապէս բաւականանում են միայն յիշատակութեամբ. ոչ մարդկային զայրոյթ, ոչ պահանջ, ոչ սպառնալիք: Այսողջ մի գաւառու, մայրաքաղաքի բնակիչների մի մասը սարսափի են ենթարկւած, հազարաւոր մարդկային էակներ՝ ամեն հասակի ու սեռի սուրի են բռնւել և մորթում են երևակայութեան հազիւ մատչելի տանջանքներով, դիպլոմատիան ու մամուլը բաւականանում են նկատողութեան առնելով բաւականում են միայն ապահովութիւն պահանջելով: Եւ դեռ բաւական չէ այս, նրանք յարձակում են հայերի վրայ, գատապարտում վերջներիս և այնքան հեռու են գնում, որ հայերին անւանում են ներախտամոռներ, „արհեստական միջոցով կոտորած հանողներ”...

Ամօթ. Հայ ժողովուրդը արհեստական միջոցով կոտորած է հանում, այդ մարտիրոս ժողովուրդը: Ի՞նչ են ասում Տաճկահայաստանի ձեր թղթակիցների հետազոտութիւնները, որոնք քաղաքակիրթ երկիրների ժողովուրդների զայրոյթն են գրգռել ու առաջ բերել այն բողոքները ու պահանջները, որոնք առատութեամբ թափում էին ձեր թերթերի սիւնեակները ու մինստրութեան գրասենեակները: Ի՞նչ են ասում Տաճկահայաստանից ստացած ձեր պաշտօնական թղթերը, արհեստական կոտորած հանող ժողովրդի տանջանքների նկարագրութիւնը. ինչո՞ւ էր փակել ձեր մինստրական ամուր մնդուկներում: Խիղճ ունեցէք, հանեցէք այդ փաստական նկարագրութիւնը և գուցէ գուգ կարդալուց ամացէք ձեզնից և, ով գիտէ, գուցէ և արտասւեք...

Այս, յանդիմանում, անարգուում է մարտիրոս ժողովուրդը, արեան, արտասուքի մեջ խեղուղղ, մերկ, սովորած, տնից ու ընչեց, պատւից, ընտանիքից զրկւած ժողովուրդը, որովհետեւ ուզեցւել է ոհանդիսական կերպով բողոքել մեծ վիզիրին՝ բէֆօրմերի համար պէտիցիա ներկայացնելով որովհետեւ այս հանգամանքը յաջող առիթ է տեղ սուլթանական կառավարութեան իր մաղթը թափելու հայ ժողովրդի վրայ: Նա հրացանի առաջին հարւածով սկսեց մեծ վիզիրին դիմուներից և, աւելի լայն ընաւորութիւն տալով տարածեց կծորածը բոլոր հայաբնակ թաղերը՝ հայ ժողովրդին սուրի բռնելով դարձեալ հայ ժողովուրդն է մեղաւոր, մարդկային իրաւունքների ու արդարութեան պաշտպանները դարձեալ հայ ժողովրդին են յանդիմանում, իսկ իսկական յանցաւորի՝ կառավարութեան մոռացութեան տալիս: Պատճառը հասկանալի

է... դիպլոմատիան հաւատարիմ է մնում իւր արհեստին: Եւ սա սուլթանի կառավարութեան առջև իր թէ պատի խնդիրն էր դրել...

Հասկանալի է թէ ինչու դիպլոմատիան և մինչև իսկ եւրոպական մամուլի Հայկական գատը պաշտպանող մասն անգամ այժմ անիրաւացի կերպով մեղադրում են հայերին, յանդիմանում ու սպառնում են նրանց մենակ թղղնել գազանի ճանկերում՝ սուլթանի կառավարութեան դիմաց: Հասկանալի է թէ ինչու են այժմ մեղադրում հայերին, թէ եւ առաջին անգամ կրակ տրողն ու վերսկողը եղել է սուլթանի կառավարութիւնը իւր գեադաների, մօլաների, սօֆտաների, ագէնտների միջոցով, իսկ հայը ընդդիմադրել և ինքնապաշտպանութեան է գիմել:

Ապարդիւն է. Հայ ժողովուրդը ոչ մի պայմանով այլ ևս չի կարող հաշտւել ներկայ պայմանների հետ, նա չի կարող դիպլոմատիայի պահանջին բաւականութիւն տալ, նրա լքման վերաբերմարը՝ լինել: Դիպլոմատիան Պոլսի գէպքի առթով մեղադրում է հայերին, որովհետեւ վերջիններս վիզները չեն ձկել թշնամու սրի առջեւ, որ իրենց ոչ եարի պէս մորթուտեն, որովհետեւ առիթ են տւել դիպլոմատիայի ներկայացուցիչներին՝ ներկայ լինելու անհնորժ ու քսանելի տեսարանի, տեսարան, որ այսօր տեղի է ունենում պետութեան իւրաքանչիւր անկիւնում գեռ աւելի սարսափելի վանդալական ձեերով, որին ենթարկւած են անխստիր կերպով ամեն հասակի ու սեռի արարածները:

Ե՞ն, լինի՛, թող լրեն, թող յանդիմանեն. Հայ ժողովուրդին այդ չէ յուսահատեցնիլ, նա երբէք յցս էլ չի դրել ոպեական լարախաղացներին՝ վրայ: Հայ ժողովուրդը գիտէ այժմ համապատասխան զէնքով պատասխանել թշնամուն: Թող տմարդ թշնամին այրէ, կոտորէ, այդ նրան չի վախցնիլ, այդ մարդկային կեանքի վերածնութեան պահանջն է: Բայց և այդ տըմարդ, ստոր թշնամին անպատիծ չի մնալ: Ամեն տեղ է ահարեկիչը, բուն երկրումն է հայդուկը և հայ յեղափոխական ժողովուրդը, որն արդէն սկսել է շարժիլ և մենք ականատես կը լինինք, թէ ինչպէս նա գիտէ վրէժիմդիր լինել ու պատժել...

Տասնեակ տարիներ՝ է, որ սուլթանի կառավարութիւնը սիսէմատիբաբար գործադրում է իւր ծրագիրը՝ ոչնչացնելու հայ տարրը, դիպլոմատիան ու այսօր պոռացող, սպառնացող մամուլը ձեն ու ծպտուն չեն հանել: Բայց երբ դանակը հասած լինելով ոսկրին, բազմաչափ հայ ժողովուրդը սկսում է ցցց տալ ինքնապատպանութիւն, երբ նա ճգնում է պատժել իւր թշնամուն, նա պահարակւում, ենթարկւում է ա-

նարդար յարձակումների. որովհետև քաղաքակրթւածները երկար տարիներ լուելուց յետոյ այսօր, որ սկսել են իրենց փեշերն էլ այլուել, ստիպւել են նորից ձեռք առնել Հայկական խնդիրը՝ խաղաղու նրա հետ և աչա ամբողջ տարի է կատակներ ու սակարկութիւն են անում...

Որպէս զի չմեղադրւենք երախտամոռութեան մէջ, յիշենք, որ վերջին ժամանակներս հազիւ անգլիական պատերազմանաւերը սիրու են առել մօտենալ Դարդանելին՝ Մեծ-Տիմարին ոյժի միջոցով հասկացնելու, որովհետև անկարող են լինում խօսքով համոզել, որ իւր օգուտն է ընդունել բէֆօրմները Այստեղ մենք չենք կարող մեզ զսպել և չենդուել մի քիչ՝ մատնացոյց լինելու կեանքի մի վերին աստիճանի ծաղրի վրայ. — ուժի միջով մարդուն և այն էլ մի կայսրութեան պետին հասկացնել իւր օգուտը. որքան պէտք է թշւան, ողորմելի լինել, և այդ Մեծ-Տիմարի քմահաճոյքիցն է կախած միջինաւոր մարդկանց ճակատագիրը... մի՞թէ սա կեանքի դառն հեգնութիւնը չէ. և ժողովուրդները պիտի տանեն դրա, այդ անպատասէր, անամօթ թշւառականի; Հարեմական կեանքով արբեցածի լուծը, շրջան: Հապա սա դառն ծաղը չէ՞, երբ եւրոպական դիպլօմատիան էլ ճգնում է պահպանել այդ Մեծ-Տըրմարի բէժիմը և պահանջում է յարգել գլուխ խոնարհեցնել նրան:

Զէ՛, արդէն կորւած են յարաբերութիւնները և այժմ միայն շարունակում է կուրը, որ վալուց յայտարարւած է, խնդիրը կը վճռւի միայն երկուսից մէկի ընկնելովը, մահովը—կամ պէտք է տակն ու վրայ լինի, ոչնչանայ սուլթանական պունիկ կառավարութիւնը, կամ պէտք է ընկնի, մեռնի հայ ժողովուրդը ինդրի միակ լուծողը մահն է:

Զէ՛, արդէն ամեն ինչ վերջացած է. հայ ժողովուրդը զէնքը վար կը դնի կամ յաղթութիւնը բոլորովին տարած, կամ անշնչացած. այլ ևս նրան չեն կարող ոչ վախեցնել և ոչ էլ խարել. աւելի լաւ է նրան մեռնել քան ապրել ներկայ պայմաններում և նա կամ կը մեռնի, կամ կապրի, իրբե ազատ մարդ, իրբե ազատ քաղաքացի: Մենք այդ կը տեսնենք:

ԵՐ ԶՆԿԱՑԻ ՏԱԳՆԱՊԼ

ՀԱՅԴՐԻԿԱԽՄԲԻ ԿՈՒԻԿԻ

Յուլիս ամսոյ 31-ին, կիւրակէ օր, երեկոյեան մօտեղը քաղաքի եկեղեցոյ հրապարակը, ուր թուրք սայլապաններ փայտ կը ծախին, 25 տարեկան հայ երիտասարդի մը հետ վէճի կը բռնւին, վերջնին իւր փաքը մի պահանջը ուզելուն համար վէճը կը սաստկանայ. հայ երիտասարդը սայլապանին օձիքը բռնած՝ իւր իրաւունքը կը պահանջէ: Սայլապանը՝ գեավուրի մը իրմէն առնելիք պահանջքը ստրկութիւն համարելով, իւր ձեռքի կացինով կը զարնէ հայ երիտասարդի գլխին և կսպանէ զայն: Կերկայ գտնւող հայեր կառավարութեան իմաց կուտան: Արդարութեան պաշտօնեաները կուդան, թուրքի սայլը, կացինը կը տեսնին արիւնոտ և այս բոլորը առ ոչինչ համարելով, ազատ կը թողեն մարդասպանը ու անոր փոխարէն կը ձերբակալեն այն հայեր, որ կառավարութեան իմաց տալու անլուր ոճիր գործած են, իբրև ֆիստոսընըզ (յեղափականան) ու կենթարկեն տանջանաց:

Երկուշաբթի օր հայ հրոսակ իսումբ մը, որ կը գլունէր Սեպուհ լերան ձորերու մէջ, լսելով այս անիրաւութիւնը, կը դիմէ ուղղակի երգնկայէ Քէմախ տանող արքունի Ճանապարհին վրայ՝ վրէժինդիր ըլլալու և ճիշտ այն տեղը, ուր Սեպուհի դէպի հարաւ ընթացող վասկը Եփրատը կը թափէ, կը ըրջապատէ զինուրական գայմագամը չէրքէզ զինուրներով: Հրոսակապետը հրոսակներէն մի մասը կուղարկէ զօրականաց առաջքը կարելու, իսկ միւս մասը ինքն առած իւզ հետ ետևնին կը կորէ: Զօրականաց առջեւը կտրողները կը ձայնեն՝ ոյանձնւեցէք՝ ասոնք շփոթած անմիջապէս ձիերը կը մորակեն դէպի յետ և երբ կը դառնան՝ կը տեսնին, որ Քեռին ալ ետևնին կարած է, յուսահատ կսկսին Քեռիին վրայ կրակ ընել. սա կը փոխարինէ և օ վայրկեան վտանգաւոր. կուե մը վերջ՝ զօրականք չաւուշ մը կուին վայրը թողլով՝ կստիպւին յանձնատուր ըլլալ Հրոսակախումբի անդամները վրէժինդրութեան անյագ փափագով կուզեն ամենքն ալ ինողնողել, բայց Քեռին կարգել է անոնց, ըսելով՝ թէ դա վեհանձութիւն չէ, դա միայն ստրուկի գործ է. իմ եղբայրը պատերազմի մէջ վիրաւոր յանձնաւծ է իրենց և իրենք սպանած են: Կերիների ձեռքենքն զէնքերը առնելին վերջ հարկ կը դատեն միւսոյն վայրը սպասել մինչեւ մու-

թը վրայ գայ: և իրենց գերիներն շուրի մէջ նստեցուցած կսկսին խմբովին զւարձախօսութեամբ ժամանակ անցնելու: Այդ պահուն յանկարծ գնդակ մը սուլելով, կանցնի խմբի վրայէն: Դա մի շէշխանէի գնդակ էր, որով հասկցւեցաւ, թէ մօտակայ քիւրդեր օգնութեան հասած կըլան զօրականաց: Ատոնց կուր բանւելը թերեւս աւելի անպատեհութեան տեղի կուտար, ատոր համար իսումքը մացառներու ետեւ պաշտպանւած կը դիտէ քիւրդերու լնիցացը, առանց պատամիանելու անոնց կրակին: Խումբը տեմնելով, թէ քիւրդի հաւարը նիշէ համնի, յարնար դիրքը կը դրաւէ, միւս կողմէ զօրքեցերու դալը արդէն կսպասէի, որովհետեւ հաւարը քաղաք էր հասեր:

Երեքշաբթի առաւոտ յանկարծ քաղաքը տակն ու վրայ եղաւ. ամբողջ չորրորդ բանակը սկսաւ դղոգել և դիմել գործողութեան վայրը: Քաղաքապետութեան պաշտօնեաները արագութեամբ և կատաղութեամբ լեցւեցան հայ թաղերը. ուր որ աշքի զարնած երիտասարդ մը գտան, լեցուցին բանտը: Ծնոյ տարածւեցան դաշտը, հայ երկրագործներ բոլորը իրենց գործի վրայէն քաշեցին և ահա բանտը նորէն լեցւեցաւ հայ բանտարկեաներով: Մինչդեռ մի օր առաջ սպանւած հայի համար դարձեալ բանտարկեցան հայեր: Չատ հիմնաւոր է հայաստանցուն առածը՝ ոհայ ե, վայ է: Ահա սուլթանի կառավարութեան արդարութիւնը, որ հայի միունքը աստին կը մնայ, իսկ մի չաւուշի համար ամբողջ չորրորդ բանակը, քրդեր ու չերքէզներ կը քաշափն հրոսակ խմբի վրայ:

Հրոսակախումբը՝ չորրորդ բանակի շարժւելու լուրն առնելով, երկու չարեաց փոքրագոյնը ընտրնց և սկսաւ բարձրանալ դէպի Սեպուհ լերան ձորնը: Այդ օրը մինչև երեկոյ. կը քալեն և կը համնին գիշերուայ ժամը 2-ին բաւական ապահով տեղ մը ուրկէ կարող կըլլային ամեն կողմէ տեսնել: Այդ օր ցերեկը հոն կոպասեն. երեկոյեան ժամը 10-ին ատեն կը տեսնին, որ կառնիէ հեղեղատը սեւացաւ չորրորդ բանակի զինորներով: Խումբը կը մտածէ այդ գիշերը աւելի ապահով տեղ մը քաշւել. բայց իրենց հսկող լրատուի փոխանակ աւելին ստոյգ տեղեկութիւն բերելու, կը ջրեն խմբին գաղափարը, ըսելով՝ թէ սոքա կառնիի ոչ խար ու արջառներն էին, որ գիւղը կը դառնային. ասոր վրայ խումբը ինքը զինքը ապահով կարծելով, նորէն նախկին տեղը կը գիշերեն: Առաւոտեան լուսաբացին կը տեսնեն, որ յիշնալ գիւղին չորս կողմը լեցւեցաւ զինորներով, որոնք իրենց առաջնորդ ունենալով Սասնոյ նշանաւոր հերոս Զէքի փաշայի նաւերը՝ հազարապետ Ահմէտ, որ իւր բարբարոսութեամբ Սա-

նոյ մէջ իւր տէրն ալ գերազանցած էր, ձեռք առին Լուսաւորչի վանուց ճամբան, որն որ խումբի առաջեւս պիտի անցնէր: Ցերեկւայ ժամը 1-ին ատեն հասան Լուսաւորիչ, ուր զօրքերը ուժապատ վանքի սենեկները ու պատերու շուրբերուն տակ լեցւեցան, իսկ հազարապետը կսկսի, իւր գազանային խաղը ձեռք առնել: Անքի մէջ ի՞նչ եղաւ, խումբը այդ, ի հարկէ չտեսաւ. միայն յաջորդ օրը առաւտօտեան նկատեց, որ զօրքերը ձեռք առին նէրէնիսի ճամբան, բայց չկրցալ մտաբերել, թէ վանքի մէջ պահապան զինորները թողած կըլլան: Այդ գիշեր խումբը իւր տեղէն շարժւելով, կուզէ մօտենալ Սեպուհի վանքը ու մի քիչ հաց առնել, զի այդ օրը հատած էր իրենց պարէնը: Անդ գիշեր խումբի անդամներէն երկուքին կը պատահի քիւրդի մը, իպիշ անուն: Քիոնին գիտնալով ատոր բարեմտութիւնը չուղեր մահացնել: Հրոսակախումբը այդ գիշեր կը համնի որոշեալ տեղը, միւս օրը մինչև երեկոյ հոգ՝ Խուցի-Քար կուցւած ժայռի մէջ սպասելէ վերջ, գիշերը 4 տար կը Խոկեն վանքը, որ հաց բերեն և զինորներու ուր գնալը հասկնան: Ցղադր կերթան և վանքի գիշերապահ զինորներուն հանդիպելով առանց հացի ետ կուգան: Խումբը այդ օրը գարձեալ կը մնայ առանց հացի: Երեկւան ամեն կողմէ կը յուսահատւին ու մի ծայրայնդ միջոցի կը դիմեն: Կը խըրկեն իրենց ընկերներէն մին Աւագ վանքը, գնացող կը մնայ հոն ամբողջ օրը, որ էր շաբաթ, ոչ հաց կը բերէ և ոչ ալ խմբի մասին ելած տեղեկութիւններ: Այդ օրը երեկոյեան զօրքերը վերագարձան դարձեալ վանք:

Հիմա պատմեմ՝ թէ ի՞նչ առիթ տւաւ այդ վերադարձին: Երբ զօրքերը հինգշաբթի կը համնին Կէրձէնիսի Քէրէր ըսւած թրքարնակ գիւղը և հոգ չկընալով խըրմին հետքը գտնել, կը վերադառնան Գոմեր կոչւած գիւղը, որու բնակիչներ հայ. և թուրք են, առաւտուն յուսահատ երգնկայ վերադառնալու նպատակաւ: Գիւղին քահանան, տէր Մարկոս, գինեմոլ և վատազգ հայը. կը մօտենայ հազարապետին և կըսէ— ոհինչ կը վնդուէր: Աւազակները, կըսէ հազարապետը: Հաւազակները կամ Սերովմէք կոչւած վանքի սահմանները կը գտնենի կամ Սեպուհի վանքը, կամ մօտակայ ժայռերու մէջ կըլլան: Առ այս հազարապետը շաբաթ օր դարձեալ ձեռք կառնէ Լուսաւորչի ճամբան:

Խումբի տեղափոխուած գիշերը, ըսինք թէ՝ քիւրդ մը երկու խումբի երկու անդամը տեսած էր. դա կը համնի իւր գիւղը Գառնի և իւր բնական բարեմտութեամբ չուզեր ձայնը գուրս հանել, միայն ցանկալով ժառայութիւն ընել հրոսակախմբին, լուր կուտայ գիւղին մէջ գտնեղ նշանաւոր հայ անձանց (այս գիւղը կարծես

յատուկ մատնութեան համար ստեղծւած է): Այլ ևս իրենց գործ բացւած է, քանի որ Լուսաւորիչ վանքին հետ արօտատեղի դատ մը ունին: Գիւղին գլխաւոր ները՝ Վարդան ողլի Մինաս, Արքահամ քէհիայ և Խաչ քէհիայ կը հաւաքին ամբողջ դիւղի հայ և քիւրդ բնակիչները, կսկսին համոզել Խպիշն, որ լուր տայ գիւղը գտնւող ձիաւորաց զօրապետին: Սա որ գիւղի արջառներու Հովիւն ըլլալով, իւր ապրուստը գիւղէն կսպասէր, վերջապէս կը համոզի գիւրացցց առաջարկը ընդունել և զօրապետին տեղեկացնել ինումբին Լուսաւորըն սահմանները գտնւիլու: Հարախ օր յիշեալ քիւրդը առնելով իւր երկու բարեկամները հափառ և բուլսուն, որ Լուսաւորըն վանքին ուներիս ներին էին, կերթայ հազարապետին քով՝ Լուսաւորիչ իսկ միւս քիւրդը կը տարրածւին Յարսուլու էշիրէթ կոչուած քիւրդներու գիւղերու և հաւարի կը կանչեն: Խումբը այս ամեն շարժումներ կը տեսնէ, բայց իւր վրայ եղած մատնութիւնէն անտեղնակ, դարձեալ հոդ կսպասէ, որ Աւագ վանքին հաց պիտի գար: Կիւրակէ առաւօտ, եղբ խմբին անօթութեան չնրիորդ օրը վերջացաւ, հացի գնացող ընկերը եկաւ լուսարացին բաւական ետք: Երեք հատ հաց բերելով մի տույի հետ, յայտնեց՝ թէ պիտի իջնել Աւագ վանքի ահհմաները, որ մեզի հաց պիտի բերեն: Խումբը այս յուսախաբութեան վրայ մաց շւարած: մոռանալով, որ ցորեկ ատեն իւր թագստի տեղէն ելլել բոլորովին վտանգաւոր էր, բայց ի՞նչ ընէր, և օրւան սովոր յաղթել անկարենի էր: Խումբը տերպեալ ելաւ իւր ապաստանարաննեն և սկսաւ քալել դէա ի Դուռուզ կոչւած ձորը: Այս պահուն զօրապետները, որ գիւղակները ձեռքերնին արթուն կը գիւղէին չորս կողմերնին, տեսնելով խումբը, կը հետապնդեն: Խումբը կը քալէ և երբ Ղչանկա ըսւած քարայրին առցըը կը հասնին, հոդ մի քանի փայտահատ թուլլեր կը հանդիպին սովոր այս այս ասու գովալել դէա ի Դուռուզ կոչւած ձորը: Այս պահուն զօրապետները, որ գիւղակները ձեռքերնին արթուն կը գիւղէին չորս կողմերնին, ակենք իւր առջելը գըտնող գետակին վրայ, որ Կառնէի հեղեղատին մէկ ձիւղն և որ Զինբութին ջուր կանւանւի: Տղայք հոդ պաղ ջորվ քիչ կը զովանան և երբ գիւղայի կողմը կանցնեն, իրենց նախկին ապաստարաննեն Յ հատ մարթինի ձայն կը լսէ, տղայք կամապարին իրենց առջելը գտնւած պարսպաձեւ զառիվարը ելլել և երբ կը նկատեն զօրքերը Քեռին ձայն կը տայ՝ Յ Տղայք, մի վախենաք, քալեցէք: Այդ պահուն զենուրներու կողմէ պատերազմական փողերու հրահանքաւ հրացանաձութիւն ըսկաւ: գնդակները սկսան կարկուտի պէս տեղալ խմբի պլիսին: Քեռին, որ խումբի առջելը կանչեն կերթար և որ շատ ուսումնասիրած էր Սեպուհի ամեն մի վայրը, գու-

շակեց, որ տեղացի քիւրդեր զիրենք պաշարելու միջոցը ձեռք առած կը լլան: Ոտղայք, մի վախենաք, քալեցէք: շարունակելով, սկսաւ ժայռի վերը ելլելը: Հազարապետը, որ գիւղակով կը գիւղէր շարունակ, կը ձայնէ՝ Յ ծօ, մէծերնին զարնէք: գնդակի տարափը սկսաւ Քեռի գիւղին: Զօրքերը երթարով, կը շատանային:

Գնդակներու այդ տարափի ժամանակ աներկոյժ ձեռք մի քայլարձակի օգնութեան կը հասնի Քեռիին, որ կապացներու սուլլոցի, տարափի տակ, կակուղ հողէն բարձրացած շամանգաղին մէջ կորսւած, կը շարունակէր իւր ճամբան աւանց այլայլելու: Վերջապէս Քեռին տեսնելով, որ իւր բոլոր ընկերները չպիտի կը նաև իրեն հետեւ հետեւիլ և զօրքերը իրենց գնդակներուն պատասխան չսամանալով, պիտի համարձակեն խմբին ետևէն գալ: Ինք, որ ամենէն տոկուն էր և վարժ այս կեանքին, սկսաւ փութացնել իւր քայլեր, որին հետևեցան մի քանի ընկերներ: Մրանց թւումն էր նաև իւր օիրելին՝ 18 տարեկան երիտասարդ *) անունով ՔոՅթը յանկարծ ետևէն տիսուր ձայն մը Յ Քեռի՛ կը ձայնէ: Քեռին կը գառնայ և կը տեսնէ իւր սիրելին՝ զառնւած: և արիւթաթակ ինկած գետնին: Բայց շւարելու ժամանակ չէր, որովհետեւ ամբողջ խումբին կը սպառնար միւնոյն վտանգը: կը հասնի անմիջապէս, վիրաւորեալը կը գրկէ և կաղնիի մը շուրբին մէջ պատըսպարելէ վերջ, զէնքերը ու փամփուշտները վրայէն կառնէ: Խեղճ աղջիկը հաղիւ կրնայ խեղդուկ ձայնով մը ըսել՝ Յ Քեռի՛, վիէժու: Քեռիին համար արելը մթնեց: բայց ստիպւած էր կարճ միջոցի մէջ դուրս գալ և յարմար գիւղը գրաւել:

Այս պահուն հազարապետը երբ կը տեսնէ գնդակներու տարափի տակ այդ գործողութեան կատարուիլը, հիացած կը սէ իւր զօրքերուն՝ Յ Տեսնէք հայերու քարութիւնը՝ որ գիւղակին անգամ անպաշտպան չեն թողուր: աւելի լաւն էր ձեզի պէս 200 զինուոր ունենալու, նոցա պէս 10 տղայ ունենայինք: Այն ատեն զինուրները կը պատասխաննեն՝ Յ Խէ որ սովորական բան մը է տաճկական զօրքերու մէջ, եթէ ունենայինք այն տեսակ խմբապետ մը, մէնք ալ հրաշագործներ կը դառնայինք: Զայս և սոյնպիսի շատ խօսքեր հազարապետը և զինուրները կը խոստովանին համարակութեան առջեւ անգամ առանց ամօթ մ'զդալու: Քիչ վերջ Քեռին կը հասնի իւր փափագած վայրը, ուրկից կարող էր իւր չորս կողմը գիւղէլ: կը տեսնէ, որ զօրքերը իրենց պատնէշներէն ելան՝ դէպի ջուրը կը գիւղէն, որ խմբին մօտենան: Քեռին մացառի մը ետև կշոկէ

*) Անունը անընթանելի է:

Հրացանը և կուղղէ Յ զինւորներու, որք իրարու ետևէ շարւած կիջնեն ջուրի վրայ: Կրակ լնելուն պէս, զօրքերը իրար կանցնին և պատնէշներին ելածները նորէն կը լեցւին քարերու տակ: Ցետոյ կստուգւի, որ այդ զինւորաց երեքն ալ սպանւած են: Քեռին կը դառնայ խումբին կողմը՝ „Տղայք, շուտ ըրէք, քովս հաւաքւեցէք“... Քայց ո՞ւր կընային հաւաքւել չորս օրւայ անօթի տղայք: Այս պահուն կը նկատին, որ զօրքերը խումբի կողմը անցած են, որոնցմէ Յ-ը նստած են այն քարի վրայ, որուն տակէն խումբէն հետամնաց տղայք պիտի անցնէին և կը հարեն տղոցը՝ „Ծօ՛, վար եկէք, յանձնւեցէք, եթէ չէք ուզեր զարդւիլ“: Քեռին կրակ կընէ երեքին մէջ տեղը նստող զինւորին, նա անմիջապէս թեկերը բացած դէպի անդունդ կսրանայ: Ասոր վրայ ջուրէն աստին գտնւող զօրքերը արագութեամբ կիջնեն ջուրի վրայ և հոն կը պատսպարէին: Մինչև այդ ժամանակ Քեռիին օգնութեան կը հասնին իւր ընկերներէ մի քանին և ահա կուրը սաստկացաւ զինւորները սկսան իրար անցնել: Քեռին մի կողմէ կը ձայնէր իւր հարազաներուն: Տղայք, թէն ուժասպառ, նորէն ոգի ի բորին կաշխատէին դուրս գալ սյդ մահարեր թակարդէն: Կուրը տեսեց, Զ ժամ: Տեսնելով, որ զօրքը այլ ևս չպիտի համարձակի իւր պատնէշներէն դուրս գալ և ինքը պիտի կընայ ատոնց հրացանաձգութեան պատասխանել: Մէկ կողմէ տղայքը խումբ խումբ կը իրկէ Բաղարչի կոչւած լեռնադաշտին կողմը տեսնելու համար, թէ զիրենք պաշարելու գնացող քերդեր և զինւորներ ուր մնացին, իսկ իրենք կը գրաւեն յարմար դիրք:

Տղայք բաւական կը հեռանան. Քեռին կը կարծէ թէ իւր բօլոր ընկերներ ապահոված կըլլան, ինքն ալ կսկսի նահանջել և կը մտնէ քովի անտառը: Կարճ միջոցի մէջ, դուրս կուգայ անտառէն, կանցնի Բաղարչի լեռնադաշտին հիւսիսային կողմէ և իւր ընկերների ետևէն կը շարունակէ ընթացքը: Յանկարծ իրենց վրայ կրակ կըլլայ: Զօրքի մի մասը որ հասած էր Բաղարչի տակ, քարերուն մէջ տեսնելով խումբի նահանջելը, կսկսի կրակ ընել: Հոս պէտք էր դարձեալ կուել: Այս անգամ խմբի դիրքը աւելի ապահով էր, բայց և այսպէս անօթութիւնը, որ իրենց ամենավտանգաւոր թշնամին էր, կստիպէ զիրենք վայրկեան մը առաջ դուրս գալ այդ պաշարումն, ուստի Քեռին կսկսի մէկ կողմէ երկուս-երկուս, երեք-երեք իր ընկերները դէպի: յառաջ խրկել Աւագ վանքի ճամբարը միւս կուել, որպէս զի գորքը շիոթած լինելով, անվտանգ անցնեն այդ կուրի միջն ալ ըստ շիոթի միւս կուել առաջ առնելով, կանցայտանան գիշերւան մլութեան մէջ:

Մին, քրդական զգեստով, ելաւ Բաղարչի արտ ըստած տեղը, բոլորովին ուժասպառ. զօրքերը զայն տեսնելուն անմիջապէս պատնէշներէն դուրս կուգան՝ „Թէսլիր, թէսլիմ“ ձայնել: Քեռուն հրացանը կը գոռայ և ահա զինւոր մը սկսաւ տապալել. միւսները հացը իրենց չեն առած, դարձեալ քաշւեցան քարերու ետև. Հոս դարձեալ կը կուին մի ժամի չափ. ընկերաց վերջը կուգայ և երբ կը տեսնէ, որ միայն Յ ընկեր մնացած են իւրեն հարազաներէն, այլ ևս սպասել չէր ըլլար, պէտք էր իրենց վիճակին դարձան տանել: Կարծելով՝ թէ միւս ընկերները, եթէ իրենց ալ չէնտելին, անշուշտ ապահովութիւն գտած կըլլան (նա չէր նկատել որ իւր սիրելիներից Յ չկան, իրեն-չերեցան), կսկսին Աւագ վանքի դիմացի զառիկերերէն դէպի ի ցած իջնել:

Քեռին անօթութենէն և ծարաւէն բոլորովին գունատ և շնչասպառ կսկսի ետ մնալ: Խումբի տղայք կը հասնին Աւագ վանքի դուրս և „Տաց, Տաց“ կը ձայնեն: Վարդան վարդապէտի եղայրը՝ թօփալ հաճի Յակոր, որ իւր վարդապէտ եղբօր արժանաւոր յաջորդն է, պահ մը կշւարի և տղայոց ձեռնթափ ճամբար տալ կուզի, բայց վանքի մէջ սրտու երիտասարդներ անմիջապէս մի քիչ հաց տալով ցցց կուտան տղայոց խորունկ ձոր կոչւած ճամբառ:

Քեռիի այս վիճակը այնչափ դէշ տպաւորութիւն ըրաւ տղայոց վրայ, որ պահ մը կարծեցին՝ թէ զարնած ըլլայ. յետոյ հանդարտեցան՝ տեսնելով, որ դա ուրիշ բան չէր, բայց եթէ չարունակ խօսելէ և կուտելէ առաջ եկած ուժաթափութիւն: Ըատ երկար չէր կընար սպասել հոս ալ ուստի երբ մի քիչ հանգչելով կազդուրեցաւ, իւր դողդողացող ծունկերը դարձեալ առաջնորդեց իւր հարազաներուն դէպի ձորին աջ կողմը խիստ անտառներուն մէջ, ուրկէ հարկ եղած ժամանակ կընային Աւագ վանքը տեսնել: Մէկ ժամէ վերջ փողի ձայնը կսկսի հնչել տղայքը կը նկատեն, որ զօրքերը հաւաքւեցան Աւագ վանք, իրենք այդտեղ կը սպասեն մինչեւ երեկոյ քայլելով, կը հասնին մի դիւդ և հաց առնելով, կանցայտանան գիշերւան մլութեան մէջ:

Յաջորդ օր ազատւածները մէկզմէկ կը գտնին. Յ հոգի պակաս էր,—մին արդէն Քեռիի աչքին առջև զարնած էր և միայն ալ զօրաց յանձնելով տեսած էր, իսկ Յ-ը բնաւ շիար՝ ասոնք, աս Յ-ը կը մնան Զրաբաժինի ջրին վրայի անացնելի ժայրերու մէջ, բայրու-

կիւ ուժաթափ, փրկութենէ անյոյս: Զօրքերը կը պաշտին չորս կողմէ զանոնք, տղայք յուսահատական կը սիւ մը կսկսին և բաւական երկար դիմադրելէ վերջ ընկերներին մին 3 գնդակի հարւած ընդունելով կիւնայ. երկուքը կը շարունակին իրենց կոփւը և երբ միոյն հրացան անգործածելի կը դառնայ և զօրքն ալ չորս կողմէ կը պաշարին տղայքը, վերջններս կստիպեն անձնատուր ըլլալ:

Ահա չորրորդ զօրաբանակի մի շաբաթ լեռները թափառելու արդիւնքը: Ան, եթէ սովոր չլլար: Չորրորդ բանակի կորուստը բազմապատիկ է. ար իրենք զօրքերն ալ բաց բերան կը խոստովանին:

Կուին յաջորդ օրը Ահմէտ հազարապետը լուր կուտայ իւր աւազակապետին՝ բանակի հրամանատարին և լեռնային թնդանօժներ կուզէ, աւետելով թէ աւազակները պաշարած է, բայց մարթինի գնդակին հասնելուն չափ մօտենալը շատ վտանգաւոր է: Սամնոյ կոտորածի հերոսը կը նրկէ չորս հատ լեռնաթնդանօթ. բայց ո՞ւր պիտի գտնէին մեր տղոցը, որոց ազատւածները արդէն ապահովութիւն գտած էին: Բանակը 15 օրի չափ Սեպուհի ձորերը, անտառները և ապառաժները չափելէ վերջ, քաղաք վերադարձաւ: Իրենք կը հաստատեն իրենց կորուստը՝ 60 սպանւած զինւոր և 100-ից ավելի վիրաւոր, որը և ճշտւեց, թէև քեռին կը կարծէր, որ իրենք սպանած են 16-20 զինւոր և մի այդ չափ ալ Սեպուհի ժայռերուն բաժին եղած ըլլայ:

Խեղճ կառավարութիւնը ամեն ճիգ կը թափի քեռին ձեռք բերել, բայց ապարդիւն: Նա ապահով է և կը պատրաստի իւր ոտքը հասած տեղը աւելի յուզման մէջ դնել:

Ն Ո Ր Կ Ո Տ Ո Ր Ա Ծ

Ա. Պոլիս, 21 Սեպտեմբեր, հինգշարթի:

Կոտորածը, որը հետեանք է հնչակեաններու մի խաղալ ցոյցի և որն սկսւել է երկուշաբթի, դեռ կը շարունակի: Երեկ գիշեր քասըմ փաշա հայոց թաղը սրի անցուցին թուրքերը սպանւածներու թիւը հարիւներով կը հաշին:

Իոլոր հայաբնակ թաղերը շատ թէ քիչ վլաստած են. մէջ այլ կոտորածներ և աւելումներ կատարւեր են. Ստամբուլի կողմ և Քասըմ փաշա թաղը մասնաւորապէս շատ

վլաստող թաղերն են: Ըսդհանուր սարսափ կը տիրէ: Դպրոցները սեպուր 18-էն գոցեցան: Սարսափահար ժողովուրդը եկեղեցները ապաւինած է: Ստամբուլի կողմը հայոց խանութները մեծաւ մասամբ գոյց են: Փողոցներու մէջ սպանութիւնները անպակաս են: Արիւնը ըստ թուրքերը զինեալ արձակ համարձակ փողոցները կը պտտին և հանդիպած հայուն կը զարնեն՝ կսպանեն չարաչար տանջանքներով: Մինչեւ իսկ թուրքերը կը յարձակին՝ ոստիկաններու ձեռքէն կը յափշտակին ձերբակալած հայը և սոսկալի տանջանքներով կսպանեն և ազատ ու անպատիծ կը շարունակեն իրենց ճամբան: Ոստիկանքը և լոտեսները փողոցները հանդիպած կասկածելի հայերը կը խուզարկեն, որի վրայ զէնք գտնեն, կը գրաւեն և զինքը կը բանտարկեն: Բակուներու մէջ սոսկալի, անլուր տանջանքներով կը մեռցնին բանտարկեալները: Թուրքերն անգամ սարսափով ու քստմնելով կը պատմեն բանտարկեալներու կրած տանջանքները և սպանութիւնները: Տամնեակներով կենդանի գլխիվար հօրեր նետած են: Բանտարկեալներու թիւը հարիւներով կը հաշին: Ստամբուլ, Ղալաթիայ Պէշիթաշ Գում-Գաբու, բոլոր թաղերու մէջ ժամ չափնիր, որ քանի մը հայ չսպանեի: Ահուելի և տըմարդի կերպով կը վարւին նոյն, իսկ անշնչացած դիակներու հետ: Անշունչ գիրակը սոսկալի ծեծի կենթարկեն նորէն: Ականատես մը կը պատմէ, որ ինքը աչքով տեսաւ՝ թէ ինչպէս անշնչացած դիակներով չարդելէն ետքը, վըանին ելած ոտքերով կը կոխիրտէին. ուրիշ տեղ մը կատաղի սօֆթանները քանի մը հայ ձերբակալած՝ ականջները, բեխերը քաշելով պրծնելէն ետքը, գանգը փշրեցին և ոտքեն բռնած քաշ տւին, ծովը նետեցին. քաշ տւած ատեն ուրիշները մահակներով, կացիններով կը զարնեին ետևէն և մարմինը իրարմէ կը բաժանէին, կը յօշուտէին:

Զինավաճառի խանութներէն իսլամը միայն իրաւունք ունի զէնք գնենք ու քրիստոնեաններուն արգելւած է: Զինավաճառի խանութներու առջև ոստիկաններ և լոտեսներ արգոսի աչքերով կը հսկեն, որ քրիստոնեաններ զէնք չգնեն: Երեկ յօտ հարիւր հայեր, որ փորձած էին զէնք գնել, ձերբակալած և անլուր տանջանքներ տարով բանտարկած են. իսկ երկու հայ երիտասարդներու այնպիսի սոսկալի, տմարդի կերպով ծեծեցին, որ հազիւ թէ կենդանի մնացած լինեն:

Խաներու, թաղերու և փողոցներու մէջ կոտորւած հայերու թիւը բաւականի մեծ է: Բազմաթիւ դիակները անշնչ ըրած են: Երենք թուրքերը կը պատմեն, որ միայն Ստամբուլի կողմէն բազմաթիւ կառքերով դիակները տարան, ծովը թափեցին, Մահմսուսէի երկու շո-


գենաւեր գիշերը հարիւրաւոր դիակներով կը մեկնին եղեր Մարմարա, ուր ծովու մէջ կը թափին դիակները: Ցարդ և ոչ մէկ դիակ անցած է հայերու ձեռքը: Խնկած դիակը իսկոյն անհետ կընին և արեան ամեն հետք անմիջապէս կանհետացըւին: Թուրք պաշտօնեաները անսպասելի ճարպիկութեամբ, արագութեամբ և չտեսնեած փութեաջանութեամբ առաջ կը տանին դիակներու անհետացման գործողութիւնը:

* *

Աւրբախ, Սեպտեմբերի 22-ին.

Երեկ գիշեր նշանաւոր դէպք չպատահեց: Սպանւած են 20-25 հոգի:

Կարին, Յրապիզոն, Երզնկայ, Թօդոսոս, Դէղէաղած ևս կոտորածներ են տեղի ունեցեր: Վանի վրայ ևս յարձակում է եղեր: Ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ կը պահասին:



Կ Ա Ր Ի Ն Ի Բ Ա Ն Տ Ի Ց

ՄԵՐ ՄԻ ԸՆԿԵՐՈԶ

Փ Ա Խ Յ Ց Ն Ե Լ Ը

Մենք այժմ սկսել ենք բանտերի հետ էլ գործ ունենալ և մեր առաջին քայլը կատարեալ յաջողութիւն ունեցաւ: Օրերումն կարինի բանտից օր ցերեկով զինորդների ու պահակների ձեռքից մեծ յաջողութեամբ փախցրինք մեր ընկեր Արշակ Սաղաթեանին:

Արշակը մի բասենցու ընկերակցութեամբ առաջի անդամն էր ոտ դնում Յաձկահայաստան և, տարաբախտաբար, ճանապարհին նրան հանդիպում են երեք զապթիաներ, որոնք, ըստ իրենց մշտական սովորութեան, անց ու դարձ անողին ենթարկում են քննութեան՝ մի որ և է բան կորզելու նպատակով, ու բանտարկում իրեւ հայ ոհօմիտաճին: Հենց նախընթաց գիշերն էլ մի անվաս ընդհարումն էր տեղի ունեցել զապթիաների և ոհօմիտաճիներին մէջ: Նոյն քննութեան են ենթարկում Արշակին և իր ընկերը. և որովհետև Արշակը չգիտէր մի թուրքի գիւղ: Ճանապարհին դեռ գիւղ չհասած կողոպտում են Արշակին՝ ենթարկելով չարչարակիքի, առնելով նրանից թէ մի արծաթ ժամացոյց, թէ սուլիչը, թէ հագուստը և մինչեւ իսկ գուլպաները:

Մենք լուր առնելուց՝ անմիջապէս միջոցներ ենք ձեռք առնում նրան ազատելու: Յայտնում ենք և Խ գրւի մեր մարդկանց, որ կաշառեն զինւրիներին՝ Արշակին ազատելու, բայց չի յաջողութեամբ չնորմիր այն հանգամանքի, որ գիւղի տաճիկները իրան գրդուած լին նորման կույնը և յանձնում հարիւրապետի:

Մերջնս Արշակին ենթարկելով անլուր տաճանքների, ստիպել է տալիս խոստովաննել իւր յեղափոխական լինելու: Միրզարէկը հասած լինելով իւր նպատակին, շտապում է Արշակին բերել Հասանգալէ և յանձնել գոյմագամին: Այս գիւղաբաղնիքը բաղկացած է 3000 մահմետական և 15 հայ տներից, մշտական պահում է մոտ 200 համբարէկ զինւրիները: Արշակին 15 օր ստիկանատանը պահելուց յետոյ, նրան տալիս են մի առանձին սենեակ և բաւականին լաւ ինամում, յուսպով, որ այդ միջոցով կարող կը լինեն նրանից գաղտներ առնել, և բացի այդ, նրան ստիպում են մասնել, իբրև յեղափոխականների, տեղական մի քանի իրենց ցանկացած մարդկանց ու այդ նպատակաւ նրանց առջուց ցնց են տալիս Արշակին: Համսում է գատի օրը: Հրաւիրում են դատապարտեալները՝ ալիքիքազիք դարբին Աղաբարին, իւչվերանցի մաջլիսի անդամ Յակոբ աղային և էրզրումցի Դաւիթ Գասեանին: Արշակը բացէ ի բաց մերժում է այդ ստորոտիթիւնը հրապարակաւ, յայտաբարելով, որ այդ մարդկանց մինչեւ իսկ չհանաչում: Այսուհետեւ սկսում են Արշակը գտուիսյին տանջանքները, որ կրկնում են ամեն օր սուլթանի կառավարութեան բանտերում: Վերոյիշեալ երեք անձն ևս բանտարկում են:

Արշակը բերում է Կարին և բանտը տրւում: Հենց այդ օրերում ստացում է բանտարկեալներին բանտից ազատելու ուղղանական ֆիրման: Ազատեցին 25 մարդ, որոնց մէջ և Հասանգալէի 3 բանտարկեալները, բայց Արշակից:

Մենք մի բոպէ բաց չթողինք այն միջոցները, որ

ձեռք էինք առել Արշակին ազատելու և այդ մեղ յաջողւթց: Խնապէս արդէն յիշեցի նամակիս հենց սկզբում, օրը ցերեկով զինուորների և պահակների աչքի առջև, նրանց ձեռքից Արշակին, փախցրինք բանտից առանց մի որ և է զոհ տալու: Թէ Արշակը և թէ ազատիչները արժմ ապահով են: Կառավարութիւնը ապշած, գլուխը կորցրած այդ յանդուն գործից, ընկել է Կարինի փողոցները ու տները՝ գտնելու թէ Արշակին և թէ ապառիներին: Բայց երկար կը փնտրի:

Ն Ա Մ Ա Կ

Ը Ա Պ Ի Ւ - Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ա Ր Ի Ց

Ծապին-Գարահիսարի և շրջակայից հայ խանութիւները ցարդ գոց են: Օդոստոս ամսոյ սկիզբը Թամզարայի մէջ տեղի ունեցած կոտորածի փորձեն ի վեր, վալի փաշայէն և Անդրաստիոյ առաջնորդ Պետրոս Խպիսկոսոսէն եկած հրամանները՝ խանութիւներու բացւելուն անկատար մնալուն համար, նոյն վալիէն յատուկ քննիչ մը ներկայանարով Գարահիսար՝ խանութիւներու բացումը կը պահանջէ: Հայերը դարձեալ նոյն պատասխանը կուտան, թէ ներկայ կառավարիչ Մուստաֆայ պէյ և իւր արբանեակները եղող ընդհանուր դատախաղի հուշէմ պէյը, հարցարնիչ դատաւորի տեղապահ տեղացի էտհէմ պէյը, հարցարնիչ դատաւորի տեղապահ՝ Մուստաֆայ էֆէնտին, թաղապետութեան շրջանակի նախագահ՝ Սապիթ էֆէնտին և նորա գրագիր տեղացի էտհէմ պէյը, հարցարնիչ դատաւորի տեղապահ՝ Մուստաֆայ էֆէնտին, թաղապետութեան շրջանակի նախագահ՝ Սապիթ էֆէնտին և նորա գրագիր՝ Մուստաֆայ էֆէնտին, թաղապահ անդամ՝ Քոթոթին, պատմատի Աւետիս էֆէնտին և պատմական դատարանի անդամ՝ Քոթոթին Անտօն աղան, կառավարութեան պաշտօնատունէն գուրս կելլան այլ ևս չոն չի մաներու պայմանաւերկորդ, մեր դատերը կը տեսնեմն և կը գիտնանք, թէ ինչո՞ւ վեց երիտասարդներ բանտին մէջ սպանւեցան. ինչո՞ւ այս չափ մարդիկ հարուստ և աղքատ բանտ լիցւելով՝ ստակով արդարացան, եթէ երմէք յանցաւորէն. երրորդ, կատարեալ ապահովութիւն կուղենք մը իննաց, ընչից և պատւոյ ահա այն ժամանակ մենք առաջւան նման մեր գործերը կը շարունակենք»:

Այս պահանջներու արդիւնքն էր, որ վերցրիշեալներէն մի քանիներ պաշտօնանէ եղած են, բայց ընդհանուր չարեւաց աղքիւնը եղող կառավարիչը տակաւին նսաած է իւր աթուը և բացարձակապէս կը պուայ, թէ որացէք խանութիւները, ապա թէ ոչ Սասունի նման ձեզ աւ կը ջարդեմ:

Ընդհանուր դատախաղի օդնականը փոխանակ պաշտօնանէ ըլլարու, որովհետեւ սուլթանական կառավարութեան հարազատ պաշտօնեան է, Ամասիայի նոյն

պաշտօնէին հետ տեղափոխւիլ կը որոշէի և լնտանեօք մրասին Սեբաստիոյ ճամբով պաշտօնատեղին գնալու մլչոցին հայդուկային խմբէ մը կը պաշարւի և երեք սուտկաններ սատկելով, ինքն աւ լեռը կը տարւի և մի քանի օր վերջ կսպանւի, շնորհիւ վեհ: սուլթանին նախը արդար վարձքը կը նորունի, բայց գարահիսարի հայդուկներն ըլլան այդ քաջերը և ժողովուրդն աւ մեղսակից, քաջաքին մէջ ով որ կան քիչ թէ շատ կտրին՝ այժմ իսկնաւ բանտերու անկիւնները, քաղցան ու ծարաւ, սոսկալի տանջանքներով կապին:

Ժողովուրդոց մեծադոյն մասը արդէն կատարեալ աղքատութեան մէջ կը հեծէր. ամիս ու կէս խանութիւ և առեւտուր բոլորովին փակ. Թամզարայի ժողովուրդը մօտերկու հարիւր յիսուն տուն քաղաքին գերեզմանատան մէջ՝ հաց կուղեն... սյսքան թշւառութիւն չէր բաւեր, նոր բանտ, նոր տանջանք և ատոնցմէ աւելին՝ գիշեր ու ցորեկ արինաշաղախ կոտորածի մը վախը ժողովուրդը կատարեալ վհատութեան և սոսկումի մէջ են ձգած:

Պատրիարքարան ուղղեալ վեց հեռագիրներ հասցէին չեն հասած և վերջերս ընդգարձակ նամակաւ մը այդ վեց հեռագիրներու ընկալազրերը խրկւած են պատրիարքարան:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Բ Վ Ա Ն Ի Ց

I

Հայրենիքի գաւաճան և խմինափի (վերաբնիչ տուեան) հայ անդամներէն նախանդեան Կարապետը զարնեցաւ րէկովէրի մէկ հարւածով՝ ասկէ 15 օր առաջ հարւածը անվասա անցաւ և գնդակը դուրս հանւած է: Ժողովրդի անկեղծ զգացումի արդիւնք էր այդ: Բայցին կատղեցաւ ինքն իր մէջ՝ տեսներով իւր մտէրիմ հարազատի կորուսաւը, բայց հակառակ ուրիշ անդամներու քանի մը տուներ միայն խուզարկելով բաւականացաւ, չյաջողելով ձեռք բերել այդ անվախ հերոսին, որ որ ցերեկով փորձեց սպանել յած մատնիչ հային:

Կառավարութիւն իիստ կզգուշանայ ժողովուգական ցոյցերէ, նա գիտէ, որ դաւնութեան բաժակը լիցւած է, և եթէ մէկ անգամ պայթում ունենայ՝ այլ ևս անկարելի կը դառնայ առաջն առնել:

Քաղաքի հայ բանտարքեալներէն 20-է աւելի աղքատեցան Յուլիս 13-ին, որոնք 2-3 տարիէ վեր կը տառապէին բանտի մէջ զուր տեղ տանելով անտանելի նեղութիւններ: Ամենքն աւ վճռւած էին 3-6 տարի բանտարքութեան քաջաքական յանցանքով: Խտամի (մահւան) դատապարտւած երեք հայեր, որ արձակւածներու ընկերներ են, կը մնան տակաւին, բազմաթիւ շատախցիններու և ուրիշ գիւղացիններու հետ: Կուսակալ առաջարկած է՝ թէ անոնք ոճրագործներ են և ոչ թէ քա-

դաքական յանցաւորներ: Առաջնորդ խիստ կերպով կը պահանջէ մնացածներու արձակումը, հեռագրած է պատրիարքարան և դեռ պատասխան ստացած չէ:

Քարձրագոյն հրամանով ազատւեցան այսօր (18 Յուլիս) 9 հատ ալ բանտարկեալներ, որոնց մէջն են և երեք մահհան դատապարտածները՝ Գարեգին Բաղեշցցեան, Մկրտիչ Մաքսապետեան և աւերակցի հիւս Գէորգ: Ըատախիցիներ կը մնան տակաւին ամբողջապէս:

II

Սասունի մէջ կատարւած սուլթանական գազանութիւններից յետոյ ամբողջ Վասպուրականը գտնւում է սարսափի, կոտորածի սպառնալիքների տակ: Երբ վերագրածան հայդարանցի ցեղապետները Սամսոյ վրայ կատարած արշաւանքից յետոյ, Բահրի փաշան կանչեց իր մօտ և սիրալիր ընդունելութիւնից յետոյ նորանոր հրահանգներ տալով՝ պատուվ վերագրածը իրենց տեղերը:

Ինչու այդպէս չպէտք է վարչի գաղան Բահրին. չէ՞ որ ոչ միայն Սասունոյ աւարից մասն հանեց իւր համար, այլ և ցեղապետները բաւականութիւն տվին նորա գազանային կրքերին: Նաւրը բաղկացած էր ոչ միայն սասունցւոց հարստութիւնից, այլ այն տեղ գտնւում էին Սասունոյ լեռնական կոյս աղջիկներն ու կանայք: Դրանք բաժանուում են ցեղապետների մէջ և քիչ ժամանակից յետոյ շշովկ է տարածւում, որ քաղաքում ևս կառավարութեան պաշտօնեաների մօտ պահւած են Սասունից բերած ուժ կոյս աղջիկներ...

Կառավարութեան վերաբերումը նոր իրախոյս, նոր հոգի է ներշնչում քորդ ցեղերի մէջ որոնք անպատճիք կերպով յարձակում են հայաբնակ դիւղերի վրայ, թալանում, կոտորթւմ, աւերակ գարձնում հայաբնակ գաւառներ: Հաստատապէս կարելի է պնդել, որ Ասպարականում մի քանի դիւղեր միայն ազատ մնացին քրդական յարձակումներից: Հարիւրաւոր դիւղեր կողապտւեցան, կորցրին իրենց ապրուստի վերջին յոյսը: Խակ դիւղացոց բողոքները անլուելի մնացին կառավարութեան առաջ: Սարսափը, երկիւղը սկսում է տիրել ամենուրէք: Սարսափ գաւառներում, սարսափ նաև կենտրոնական քաղաքում, ուր գտնւում են փաշան, եւրոպական տէրութեանց ներկայացուցիչները:

III

(ՀՈՂԻ ԴՆԴԻՐՈՒ)

“Կոտորում են, կողոպտում, աւերում են անտէր Վան”: Այս դեռ բաւական չէ: Խոլում, բռնութեամբ յափշտակում են հայր հողը այն հողը, որ կուլտուրական ժողովրդի տան սիւնն է, նրա ապաւենը: Յափշտակել հողը, տալ տնտեսական ամենածանը հարւած՝ նոյն

բանն է: Եւ դարերով թափում են հայ ժողովրդի գլխին այդ անդութիւնաբարը: Հայ, դու քար ես, թէ՛ ապառաժ, չե՞ս զգում մահ բերող դառն ցաւը: Ծարժւի՛ր, շարժւի՛ր, թշւառական, շարժւի՛ր անդութիւնը քո այդ համբերութիւնը մահ է կոտակում քեզ: չե՞ս զգում այդ: Եւ դու պիտի շարժւի՛ր, դանդաղկոտ, և դու պիտի բողոքես:

Խոլում, բռնութեամբ յափշտակում են հայի հողը: Ահա մի գազանային օրինակ ևս—թշւառ: Ծահ-Բաղի գիւղի հողային խնդիրը: Մի քիչ համբերենք: Վասպուրականի մէջ Մոկս գաւառի, Ծատախի, վերին Մահմադիկի և այլն ամենալաւ հողերը գրաւած, յափշտակած են, Աղքակ գաւառի գրեթէ մի երեք երրորդական մասն յափշտակած են շէյխ Համբիտն և բէգեթը:

Տոսպայ մէջ Զորեանց գիւղի հողերը յափշտակեց մի ինչ որ շէյխ իւր կեղծ, շինծու քօչաններով, իսկ ամբողջ Խիզանի (Քիթ. Գիլ) պտղաբեր հողերը կլանեց շէյխ Ֆէլալ-Էդդիի իւր ներկայ սերնդով: Իսկ այսօր, հենց վանեցիների քմիթ տակին, Վանի հողերին սահմանակից (Հիւս. Կողմի) Ծահ-Բաղի բազմամարդ զուտ հայ գիւղի հողը կէսից աւել յափշտակում է մի ինչ որ Մէհմէտ շէյխ: Որքան շատ են այդ լիրը շէյխները Եւ ինչ իրաւունքով է խօսում այդ մոլեռունդ Մէհմէտը: Ահա նրա հողային հաստատութեան թղթերը: — “Իմ հայրս, պատս 40 թէ 50 տարի առաջ այդ մէծ հողի կտորը տալիս էր շահ-բաղեցի Փանոս անունով պարունին և նրանից տասննորդ ստանում, հետեւապէս և այն պատճանում է ինձ, որի համար ահա ներկայացնում եմ, իրը վկայ, այն ծերերը, որոնք տեսած կամ լսած են այդ աւանդական պատկանելութիւնը”: Եւ բաւական է այս խայտառակ ծիսակատառութիւնը տաճկական ուարդար օրէնքի առաջ: Խրաւոնքը Մէհմէտին է: Իսկ խեղծ գիւղացիների հողային թղթերը, վկաները, տասնեակ տարիներով նոյն հողի մշակելը, դիւղացիների աղաչանք, պաղատանքը, նրանց զաւակների ու կանանց արտասուքը, դառն մորմոքը ուարդար գատաւուներին առաջ մի կոպէկ չարժէ: Ապրիլ 7-ին գրեթէ շաղբաղցիները տարւեցան, որոշւեցաւ նաև այդ հողի վրայ գտնւող հազարաւոր ծառերը, տասնեակ այդիները, 100-ամեայ կաղնիները քանդել և յանձնել գիւղացիներին, ինչ հակասութիւն: Այս խնդիրը ծագում առաւ 92 թւին, յուղելով գրեթէ 2 տարի, ահա այս Ապրիլին իւր լուծումն պիտի ստանար:

Խլի՛ր, աւազակ խլի՛ր ժողովրդի հողը ամօթալի դատով, այդ մի չնչեն բան է քո մէծ աւազակութիւնների շարքում: Յափշտակել գիւղացոց հողը նշանակում է նրան կենդանի գերեզման գնել: Բայց մեկը համոզւած ենք, որ հայ ժողովուրդը մինչեւ այդ մահւան դուռը լուռ չպիտի անցնի... շահ-բուդաղցիները որոշած են ամրող գիւղով, մէծից մինչև փոքր հրապարակով բողոքել այդ ցեղեկեան աւազակութեան դէմ:

Ն Ա Մ Ա Կ

ՑԻԳՐԱՆԱԿԵՐՏԻՑ

Հակառակ սուլթանի սաստիկ հրամաններուն, որ ասկէ մէկ երկու ամիս առաջ կը տեղաբ տեղուս կառավարիչ Սլքրի փաշայի գլխուն, թէ ամեն ջանք ու ճիկ ի գործ դնել և աղաղութիւն պահ պահելու և հայոց հետ համերաշխ ապրել, կարծես, — այս խօսքերը սիսալ թարգմանւած լինէին Սլքրի փաշայի կողմից, որ օր ըստ օրէ բունութիւնները գազանութիւնները ու անգթութիւնները կրկնապատկեց մեզ հայերուս, ինչպէս նաև բոլոր քրիստոնէից վրայ: Թուրք ամբոխը, որ սկզբից մի քիչ պատկառանք կը տաճէր մեզ՝ հայերուս, որ աւելի վախէն յառաջ կուգար, քան իրենց ազնութենէն, — այժմ բոլոր թուրքերը, քիւրդերը, արաբներն քաջալերելով կառավարութենէն և տաճիկ զինուրդներէն, որ իրենց հետ հաւասար կը գործեն, ամեն տեսակ գազանութեան ու վայրենութեան միջոցների գործ կը դնեն հայերուս վրայ, որ հայ տարրը ոչչացնեն: (Տիգրանակերտու գաւառը բարենորոգիչ գաւառներէն մինը լինելով, հայերու բաւական մեծամանութեան թիւ մը կը կազմի: Ժրաջան հայ կառավարիչ քարենալ կարգելու համար՝ հայերը կոտորել ըսկած են և մէկ մէկին վերջացունել): Ամբողջ քաղաքը ի բաց առեալ գիւղերը որ աւելի գէշ են, սպանդանոց դարձած է, ամեն փողոցի մի անկիւն մի մարդ կսպանեն, շատեր կը խեղդեն, սարսափը մէծ է. ամեն ոք տունը փակւած, աչք յառած, բարենորոգումներ ասւած փալաս թղթի կտորին կսպասեն, իրեն վերջին յոյս եթէ մի քիչ էլուշանայ եւրոպայի բարենորոգումներու մուտքը ի հայաստան, մէծ ջարդ անխուսափելի է. տաճիկ մոլեւանդ ժողովուրդ՝ միացած քիւրդերու հետ, սոսկալի կերպով կատաղած է՝ խածնում, պղծում են և բացարձակապէս յայտարարում են, թէ սուլթանէն հրաման է եկած, ամբողջ գեավուրներ պիտ ջարդենք:

Պատմէնք մի քանի դէպքեր որ այս օրեր տեղի ունեցան, որոնց ես ականատես եղայ սրտածմլիկ:

Նագդալ Յովլէփի Սարրաֆեան անուն մի պատաւառը անձուր մինչ ցայժմ իւր արհեստով կապրէր, սակայն այս վերջին տարիներում բոլոր արհեստները և առետուրները վատթարանալով ու գագարելով, ձեռքին փոքր դրամագլխով ընտանիքը ապրեցնելու համար փոքրիկ խանութ մը վարձած լումայափոխութիւն կը նէր. երկուն մը դրամները հետ առած տուն կը վերադառնար, փողոցի մը մէջ երկու գիւղուրդներ յարձակւելով վրան, երկու երեք սուրի հարւածներով գետին կը տապալին, դրամը առնելով կանչետանան, անմիջապէս

մի քանի անձինք վրայ կը հասնեն, խեղճը հոգեարքե մէջ կը փոխագրեն և կառավարութեան իմաց կուտան, կուգայ կառավարութիւնը, կսկսի քննել անզգայ հոգեարքն, շատ մեծ ջանքեր կը լինեն խօսեցնելու, սակայն անկարող կը լինին, միայն ողարկեց՝ կարտասանէ և ո՞վ հարցման չպատասխանելով, մի քանի վայրկեան վերջ կը մեռնի:

Կառավարութիւնը ողարկեց՝ բառը Սարգիսի կը թարգմանէ և անոր յաջորդ օրը նոյն փողոցի մէջ ընակող 45-50 տարեկան բարեպաշտ Սարգիսին ձերբակալել կուտայ. բայց մի քանի վկաներ կը հասնեն՝ թէ ոմնիք տեսանք երկու երեք զինուրներ՝ այդ փողոցէն փախչելով, ուրիշ փողոց մը գարձան՝ թէ Սարգիս աղան և թէ վկաներն մահւան կը գատապարտւեն: — Տեղէս՝ կէս ժամ հեռու Ալի փուն ար (ս. Աստածածին) գիւղի քիւրդերէն մի խումբ զինեալ կը մըտնեն և Աստածածին եկեղեցին՝ եկեղեցւոյ բանալին պահանջելով, ո՞ծամակոչը քաղաք գնալով, բանալին հետը տարաւ, կը պատասխանէ կինը. խեղճ ժամկոչին կինը շատ մը չարչարելէ ու անպատւելէ վերջ կը կոտրեն դուռները ու կը ջախջախին պատուհանները և ներս կը խուժեն, անասնոց և մարդկանց աղերով կը պղծեն բոլոր սրբութիւնները եկեղեցին մէջ ցայժմ պղծւած դրութեամբ գոց կը պահւի. պատրիարքարան բողբւեցաւ, գեռ ձայն մը չեղաւ:

— Քաղաքիս ոստիկանութեան հազարապետներէն մին, հայոց մէծ շուկալին մէջ պտտած միջոցին, մի տաճիկ խենթի կը հանդիպի և կստիպէ հայ տէրտէրի պէս պատարագ ընել, և ապա հայհյել կտայ եկեղեցւոյ, կրօնի և ազգի, ինչպէս նաև հարուստ նշանաւոր խանութպաններից շատերի անձնականին և ոչ ոքից պատասխան մը կամ շարժում մը կելլէ, կարծես, քարե արձաններ լինէին:

Ալ ո՞չ պատիւ մնաց, ո՞չ ամօթ, ո՞չ կեանքի և ոչ կայքի ապահովութիւն կը տիրէ. բոլոր խանութներն գոց, շատ մը խեղճ քիւլֆէթներ (ընտանիքներ) անօթի կը մեռնին, ամբողջ օրը 5-10 փարայի առեւտուր չընողներ շատ կան, քաղաքէն մէկ կամ երկու ժամ հեռու չէ կարելի գնալ, կսպանեն, կը կողոպտէն և սոսկալի կերպով կանդամահատեն վայրենաբար, մեռցնելու չափ ծեծել, թալաններ, հայհյանք սովորական բաներ են: Ումանցից կուհարցնենք ինչո՞ւ այսպէս անգթաբար կը վարւէք. կասեն՝ ո՞քիչեւկի պու տըր, պէօյիւկի կէրիտէրու, այս գեռ փորըն է, մէծը ետն է. այս խօսքերէն կը գուշակենք ընդհանուր ջարդ պիտի տան քրիստոնէից, ինչպէս արդէն շատեր անամօթաբար կը պուան, կը պտտեն՝ թէ բոլոր գեավուրներ պիտ ջարդենք:

Յուսահատութիւննիւ վերջին ծայր է, պայթումն երկու կողմից ևս տեղի պիտի ունենայ:

Երանի ձեզ, ով ազատ երկրի մէջ ապրող եղայրներ, մոռացէք, մէկ կողմ գրէք անցածողութիւններնիդ, որչափ ալ վշտերնիդ, ցաւերնիդ շատ լինէ, նորէն երանելի էք, որ ազատ կը խօսէք, ազատ կը շարժէք. արդեօք մոռցած ձեր հայրելն, ձեր քոյրերն ու եղայրներն գոնէ օգուտ քաշեցէք ձեր ազատութիւնից ու

օգնութեան հասեք մեղ կամ ձեռք կառկառեցէք, ալ համբերութիւնը ոճր ադր ործ ութիւն է, անտարք երութիւնը մարդարապան ութիւն:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՂԵՐՏԻ

II

Եերբակալւած եօթն հոգին, որ զօրանոց տարին, հոդ նախ ուզեցին չւանով խեղգել բոլորը բայց վերսոյշեալ Համե էֆ. չի թողներ, բանտ կը տանին. հոն նորէն կը տանջեն, այնքան կը զարնեն, որ շատերու բերնէն արին կը վազէր, երկու օր աղէկ մը չարչարելէ և տանջելէ ետեւ ծանր կաշառ առնելով, կարձակեն. սակայն Աւրմոն մի շաբաթ կը բանաարկեն, և աւելի շատ ստակ կառնին իրմէ. Զինւորները և տաճիկները ուզածնին ըրին, թալանեցին, կողմակացին ամեն ինչ, դարձեալ ազատեցան. իսկ հայերը ծեծը կերան, շատերը վախին մեռան, մօտ երէք ամիս 300-ի չափ հայ հիւանդ էին վախին, և սակայն դուրսը ոչ ոք տեղեկացաւ, այնպէս ծածկեց սուլթանի բարբարոս կառավարութիւնը:

Անցեալ տարի Խսայ Ըպէ Համատը Հաճի անունով անպիտան տաճիկը կապալով առեր էր Սղերաի ամբողջ այգիներուն տասանորդը և փաշային հետ միանալով, սկսաւ ամեն տեսակ հարստահարութիւններ ընել, այգիներուն վրայ ծանր տուրք կը գնէին, այգի չունեցողէն ալ որպէս թէ սիալմամբ կառնէին: Հանոյ Մ. Խւսէֆեանին այգիին վրայ տուրք դրին 30 զրուշ, որ այգիին մէջ տուաւ, բայց ետէն երկու անգամ ալ զարնելով, չարչարելով՝ թէ զինքը և թէ որդին, 60 զրուշ ևս առին: Ասատ Մանուկեանին վրայ 4 զրուշ տուրք դրին և 20 զրուշ առին: Ասատ Մանուկեանին վրայ 3 զրուշ տուրք դրին և 13 առին. այն ալ ի՞նչպէս—մայրը չարչարելով և վերմակը ծախելով: Ակոր և Աւեկրկու եղարց այգիին վրայ դրին 65 զրուշ տուրք և առին 115 զրուշ և այլն, և այլն: Այսպիսի շատ մը դէսքեր կը լւան, տաճիկը կաշառներով կազատի, իսկ հայը կը, հեծէ ու կը հեծէ:


Սղերտի մէջ կայ հայ ընտանիք մը որու մասին ամեն սղերտի երախտագիտութեամբ կը խօսի, այդ է Խօջա Մուսայ Տէօլէկեանին տունը: Ահա քանի տարի է, որ սղերտոց սիրելի Խօջա Մուսան մեռած է, պաշտպանելով իւր գիւղը՝ Գիւղալար—քուրդերուն յարձակմանց դէմ; անոր մահւամբ Սղերտի հայ ժողովուրդը կը կորսնցուց իւր ամենաարտար և ամենազդեցիկ ազգայիններէն մէկը: Հիմա անոր եղբայրը Խօջա Յա-

կոր անոր տեղը կանցնի, Խարզանի ամբողջ հայ ժողովուրդը անոր պաշտպանութեանը տակ էր, քիւրդերը միշտ կը յարձակէին թէ իրեն կալւածներուն և թէ գիւղացոց հողերուն վրայ, արտերը կրակ կուտային, ցորենը կը գողնային, և ինքը միշտ կազմ ու պատրաստ էր անոնք ետ մղելու, եթէ կանայք, աղջիկներ փախցնէին, անմիջապէս կերթար, յետ կառնէր, եթէ մէկուն ձին, ոչխարը, կովը գողնային, կերթար կազատէր: Տաճիկ կառավարութիւնը շատ ծուռ աչքով կը նայէր անոր, և ամեն միջոց գործ կը դնէր մէջտեղէն վերցնելու, ինչ պէս եղբայրը Խօջա Մուսան վերցուց: Օր մը ոստիկանները առանց մուխթարի անոր տունը մտան, խուզարկեցին և այնալի հրացան մը գտան, ինքը բարկացաւ, ո՞ինչ իրաւունք ունիք տուն մտնելու առանց մուխթարի՛, և կառաղութենէն ինքն ալ սկսաւ հայհայել. կառավարութիւնը բանտարկեց զինքը, 200 ոսկի կաշառք տւաւ Խօջա Յակորը, բայց տաճիկ կառավարութիւնը տակաւին չը կշտացաւ, և մինչեւ որ բոլորովին չծըծէ, չանչնչացնէ, չի պիտի արձակէ, հազիւ հազ ձեռքն ինկեր է իւղալից պատառ մը և խորամանկ ընչաքաղց կառավարութիւնը ձեռքէ չձեռք: Խսկ կրկիրը, Խարզանի որբ մացած հայերը... անոր բանտարկութենէն ի վեր, ահա մէկ ու կէս տարի, քուրդերը սանձարձակ, առանց ու է արգելքի և խոչնդոտի տակն ու վրայ ըրին երկիրը, ժողովուրդը անպաշտպան, անօդնական, կը ճգէ երկիրը և կը գաղթէ. Գիւղալար, Բարայէ և այլ հայաբնակ բազմանարդ, այլ օդասուն—ու գեղազւարձ բնութեամբ զեղուն գիւղերը այսօր անմարդաբնակ են գրեթէ...

Շատ շատ նեղութիւններ, հարստահարութիւններ կը լւան, մահմեդականներ կը գարձնեն, աղջիկ կը փախցնեն, գեղեցիկ տղայ կը լւկեն, կով, եղ, ոչխար, ձի և այլն կը գողնան, կը տանին, զարհուրելի տուրք կը գնեն, տասանորդը դնելէն ետեւ կաւեցնեն, տունը, տեղը, կահ կարասիք, ունեցած-չունեցածը կը ծախին և տուրք կառնեն: ամեն օր տուրք կը ժողովին, կը ժողվին ու կը ժողվին, երբէք չհատանիր, այս տարի անցեալ տարւայ տուրքը կը ժողվին, և քանի որ այսօր Պոլսոյ վարչութիւնը արագօրէն հեռագիր հեռագրի վրայ կը զրէկ և կշտապեցնէ տուրքերուն, աւելի, կամ աւելի ճիշտը, թալանի հաւաքումը ալ երեակայեցէք Հիմա մեր աղբատ և յետին չքաւորութեան հասած ժողովրդին վիճակը, կը ծեծնեն, շատերը արիւն կը թըքնին, կը հիւանդանան և կը բանտարկւին, որ բանտի ծանր կապանքներու տակ և խոնաւ, մթին ու ամեն տեսակ կեղտոտութիւն բուրող բանտին մէջ բժշկւին: Ի՞նչ է այն գիւղացին վիճակը, զգացե՞ր եք երբէք (բայց մնաք աչքով ենք տեսեր և ականջով լսեր), երբ նորայարոյց գարնան հետ կը զարմնի, ուրախ երգերով, գոհաբանական աղօթքներով կը դիմէ գէպի մնութիւնը, կը հերկէ, կը մշակէ անոր ամենամեծ պարգեր, երբ հասուննայ, կը հնձէ, կը բեռցնէ իր հաւատարիմ իշուն կամ մանաւանդ եղին վրայ ու քաղաք կը տանի, կը ծախէ, ստակը գրպանը կը դնէ, հաւատարիմ կեն-

գանին առջելը նետած գոհ սրտով, ուրախ և զւարժ, երգելով և պարելով ճամբայ կիյնայ, քաղցր ապագայի վրայ կը մտածէ, և յանկարծ, զինուրած քուրդը վրան կը յարձակի... մարդը կը մնայ գետին, մօրմէն ծնւածին պէս մերկ, անշնչացած։ Այս է մեր բոլորիս դրութիւնը, վիճակը, չունինք և կարծես թէ իրաւոնք ալ չունինք ունենալու ուրախ օր՝ վայելելու բընութիւնը, որուն կը ձգտէ ամեն մարդ։

Ի վերջո քանի մը խօսք ալ տաճիկներուն մասին Խսկապէս ասած, ես կը մեղքնամ այս թշւառները, թէե անոնք հայը կը կողոպտէն, կը հարստահարեն. քայց եկուր տես, երբ իրենք ալ կը կողոպտէն և կը հարստահարեն իրենցմէ աւելի բարձր գտնողներէն— էֆէնտիներէն, պէկերէն, ազնւականներէն։ և, մնջ էշը ախոռը թողոցինք, տէրութենէն, հոգեորականներէն։ Խակայն անոնք՝ տաճիկները—միշտ մնաներով հոգեորականներու փոտած և նեխած գաղափարներով, կենսական հայեացքներով, միշտ տգէտ կը մնան, տէրութեան ուզածն ալ այդ է, տէրութիւնը որ խսկապէս աւազակութիւն է, բարբարոսութիւն է, կը ծնէ ու կը ծնէ անոր մարմինն ու հոգին, շոյելով ու շոդրորթելով...



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

(Պատմէն մի պաշտոնական գրութ'նան)



ԱԳՐԱԼ-ՄԱՑԻՆ. Ագրալ Մատէնի յոյներն Փէհչէվան օղուր Թատորի իր պարտիզէն քակւած ծառերուն հեղինակներն բռնելու համար՝ մութի մէջ սպասած ատեն, երկք հատ զինւորներ պարտիզէն ներս կը մտնեն՝ պատին վրայէն անցնելով։ օգնութեան հասնող ժողովրդին շնորհիւ, զինւորներէն երկուքը կը բռնվին, իսկ երրորդը կը յաջողի փախչել և կերթայ եղելութիւնը Միւլազիմ Հասան աղային կիմացունի։ Հասան աղան Թատորին առնուր պաշարելով՝ կուրի կսկսի նախկին Սանտրգ Էմինի Էֆէնտիին եղայրը Պարաշ գլխէն և ուրիշ 8-4 անձ ալ տարբեր տեղերէ ծանրապէս կը վիրաւորւին սւիններով։ Հասան աղան՝ բռնւած զինւորները առնելով, կը մեկնի Պայմագամին տեղեկութեան վրայ Խօզզատի թաղապետական բժիշկ տօք։ Ըիրիմեան կը զգկի, որ գալով վիրաւորներուն սւինով վիրաւորւած ելլանին կը հաստատէ։ Նշն գիշերւան մէջ Մատէնի ժողովրդի զգացած տագնապը բացատրել կանկարողնամ։

Հասան աղան երբ Թատորի տան կը մօտենայ՝ կրակի և յարձակման փողերը զարնել կուտայ Զէլքէդ-

ները գիւղի մը մօտելքը Փիթանեան Արթին աղային ծառան, կիւրենցի Գէորգի կը կողոպտեն, գրաւելով անոր 12 սոկին և մօտ 8 սոկի արժեցող իրեր։ Գարա-Մաղարա գաւառակի միւդիրը նոյն գիւղի մէջ սենեակ մը նստած հանդիսատես կըլլայ այս գէպքին, ոչ սոտիկան մը և ոչ ալ գիւղացի մը կը զրկէ այս գէպքը արգելելու և կամ չարագործներին հեռացնելու համար։ Հաւանական է, որ այս աւազակ չէրքէզները յիշեալ Մանչար պէյին ստորատասները էին։



ԳԱՐԱՃԱՆ-ԼԵՐԱՆ Ազիզիյէ գաւառին կից՝ Գարաճա-Վերան անուն յոյն գիւղին մէջ արիւնահեղ ընդհարում մը եղած է։

Գարաճա-Լերանի մօտ Փալաս գիւղի խալամերը զինւած կը յարձակին վերցիշեալ գիւղի վրայ, երբ տղամարդերը արտերը կը գտնւին եղեր. կանայք վախերնուն տուներնուն կը քաշին, թուրքերը տուները մանելով՝ շատ մը կանանց պատիները բոնաբարելէ վերջ, բաւական իրեր ալ կառնին. եկեղեցին մտնելով՝ կանթեղները կը կոտրտեն և նիփոլա քաշանայն խեղելելու համար կը պառկեցնեն, բայց խալամի մը շնորհիւ կը խալսին, որովհնուե անոր բարեկամն է եղեր։ Այս եղելութիւնը իմանալով, տղամարդեր դաշտէն վերադառնալով՝ կուփ կսկսին։ Լածնուս նայելով, 10-15 սպանած և շատ մը ալ վիրաւորներ կան։ Զինճիտէրէյի միտրոպօղիտը ամեն պաշտօնական տեղեր դիմումներ ըրած է և կընէ։



ՔԻՒՉԻԿ-2ԱԹ. Գաւառնուս մէջ աղքատութիւնը անբացատրելի աստիճանի մը հասած է։ Կիները լեռներէն խոտ հաւաքելով, տնական պէտքերու կը գնան, բայց այնպիսի ժամանակի մը մէջ կապրինը, որ հնար չէ անվաս գեղին կամ քաղաքին եղերքը ելլել կարելի ըլլայ։ Քիւչիկ-2աթէն քանի մը կիներ խոտ հաւաքելու համար գիւղէն դուրս կելլեն։ Քէօքրիւմիդ գիւղէն Օղլան անունով թուրքը մը ասոնց վրայ կը յարձակի և Ծաղիկեան Կարապետի կնոջ պատիւը բռնաբարելէ վերջ՝ աջ ձեռքին 4 մատերը կը կտրտէ։

Լածնուս նայելով կառավարութեան բողոքւած է, բայց ի՞նչ օգուտ, որ կամ մէկ երկու օր կը բանտարկեն և կամ բնաւ չեն հարցաքնիր։



ՍՈՒՆԿՈՒՐԼՈՒ. Խեղդելով ջաղացքի մը անիւս տակը ձգւած յոյն նիկօլային սպանիչները գտնւեցան. մէկը Սունկուրլուն ձիրիտ օղուր Արիք, միւսը Սունկուրլի գեղերէն Խնձէ օղուր մը է։ Անոնց խոստվանութեանը նայելով այս ոճրագործութիւնը թշնամութեան և կամ շահու համար չէ, այլ միայն կեավուր մը սպանելու հաճոյքին համար ըրած են. արդէն զոհը չեն ճանշնար

եղեր, և վրայէն ալ լոկ 6 փարա գտնւեր է: Մելիք Գարրիէլ պէյն բանտէն արձակւած չէ: Ասոր կինը սպանւած է տաճիկի մը ձեռքով՝ բայց այրը բանտարկւած է, իբր մարդասպան: Գայմագամ՝ Գարրիէլը մահապարտ ընելու համար վերջին ծայր կը խորհի. Հասան և նուրի չավուշ անուն երկու պահակներ կանչելով՝ այսպէս կը պատւիրէ. „Գիշերը ժամ 4-5-ին ատենները, տուն գալով զիս փնտուցէք և բանտէն բերելիք մարդերնուգ ըսէք, որ երբ քովս գան, ըսէք՝ թէ մենք ականջովիս լսեցինք, որ Գարրիէլը քունին մէջ կը զառանցէր, թէ առաջ սխալեցայ, պէտք չէր որ կինս սպանէիս: Պահակները այս խրամներ մէկ քանի բանտարկեալներու տւած ատենին հոն գտնւած իսլամ բանտարկեալ մը կը լսէ. և եղելութիւնը ամբողջ բանտարկեալներուն կը հաղորդէ. այն ծրագրին այսպէս պարապի ելլելը տեսնելով՝ գայմագամը կը բարկանայ և պահակներ պաշտօնանկ կընէ: Գուրապազցին՝ յոյն երիտասարդ մը՝ սպաննեալ Ափրին չավուշին Հեղինէին (մեռեալ կինը) տունէն ելլալը տեսած ըլլալով՝ դատարանի մէջ ըսաւ և հինգ տասը գիւղացիներու մէջը Ափրէ չավուշը ձանչցաւ, զինւորի լաթեր հադցուցին՝ դարձեալ ձանչցաւ թէւ, բայց չավուշ և գարալի ողլու Հիւսէյինը ազատ արձակեցին. իր ջանքը, հոդը Գարրիէլը դատապարտել տալն է:

ԵՕԶ Ա.Ս.—Եօզատի շուրջը տիրող անապահովութեան, կառավարութեան խժդժութեանը պատճառով հայերը այս գուժի ժամանակին տուներնին քաշւած մնացած են, քաղաքին մէջ ազքատներու հաշիւը չկայ, միւս կողմէ գիւղերէն ալ խումբ խումբ կուգան, ձամբուն վրայ հանդիպած հայ մը իրը յեղափոխական կը ձանաշւի և նեղութիւններ տալով ստակներ կառնի:

ՄԱԾՏԱԿ գիւղից.—Գիւղիս մէջ գտնւող քիւրդաց պէտ, որին անունն է Սէյիտ ուկյ քանի մը սրիկայ քիւրդերով կը յարձակի եկեղեցու վրայ. կրակ արձակելով, մէկ քանի մը անձանց կը վիրաւորի և ամենքն ալ գուրս կը վնդէ: Խեղճ քահանան կինի անպիտանի ուռը, բայց ի զուր եկեղեցւոյ գուռը կը գոցի, բանալին կառնի ու կերթայ գիւղ—իր դաշնակցի մօտ: Յետոյ, կը կանչէ գիւղի մէջ եղած դպրոցի ուսուցչին և կսպառնայ, հայ վարժապետին ու կըսի՝ այս գիւղէն պիտի հեռանաս, այս դպրոց չի պիտի լինի, եկեղեցին փակելով, դպրոցն ալ կը փակէ ու այսպէս կը հեռանայ գիւղէն:

Ք.Լ.Ի.Ց. Ք.Ղ. Գասապայէն 2 ձի և 3 ջորի Սէյտէ-Գասըմ ըսւած լեռնէն՝ քաղաքէն երեք քառորդ ժամ

հեռի, խուպատցի աշիրէթէն տարւեցան անդառնալի. վնաս օսմ. 4-5 ոսկի:

—Սերկնել դիւղացի Արալանեան կարապետին ձին՝ 15 ոսկոյ արժէքով գիւղէն քառորդ ժամ հեռի արօտատեղին լոյս ցերեկով խուպատցի քուրդերն տարին:

—Խուփիսեցի Փոստայեան Խաչատուրի մէկ կովս և երկու եղն նոյնպէս խուփիսեցւոց Բարթողեան ձորէն նոյն աշիրաթն զարկաւ տարաւ: —Խուբս-գոմցի թուրք Հաճի Մուստաֆային եղբայրը Բարթողեան ձորը թալնելով, խուպատցիներ ձին տարին լոյս ցերեկով կառավարութիւն միայն սոյն անձի բողոքը լսելով՝ Կոճակի միւտիւր թէսուվ աղայի թէզ-քէրէ գրեց. ողորմելի Մուստաֆան յոյսը դրած այդ թէզքէրէին վրայ գնաց միւտիրի մօտ և անկից գողերու տունը. իւր խոզաքին, շալվարը և զգեստները կը տեսնէ քուրտին վրայ, կուլայ, կաղաղակէ. անամօթ քուրտը կուրանայ, իւր գողութիւնը և կսպառն յ իւր զըրպարտութեան վրայ, յուսահատ Հաճի-Մուստաֆայ տուն դարձաւ, անիծելով կառավարութիւնը և հայհոյելով պաշտօնեանները:

—Կուան ձորէն, որ Խուբսէն կէս ժամ հեռի է, Մահաւեսի նազարէթ Փոստայեանի 2 կով. և մէկ եղն տարին, ցերեկ ատեն:

—Ամսոյս մէջ հասնանցի աշիրաթէն Օզօյի տղան 25 ձիւաւոր համիտիէով՝ հարուստ Խօշմաթլեաններու տունը եկան. գիւղին մարդերը բռնութեամբ քաղցին, գիւղն ամբողջ ահով լցցուցին ու առաւօտ մէկնեցան՝ մուրհակաւ 25 ոսկի վերցնելով:

—Խուպատցի աշիրէթին այս կատղիլը յառաջ եկած է տեղւոյս գայմագամին յատուկ թելագրութենէն. Կոճակի միւտիր թէսուլ աղան, որուն տրամադրութեան տակ կը գործէ համարձակ սոյն աշիրէթն, այժմ՝ 2 բաժնի խմբով կը գործեն՝ մին 25 անձով, որ գողունիները տեղաւորելու պաշտօն ունի, միւսն 30 անձերով՝ ցերեկեայ հրոսակ՝ տեղաւորւած Բարթողեան ձորին անտառը: Կառավարութիւնը կը լսէ այս ամեն, բայց կը լուէ. ամեն օր անպակաս են սոյն գունակ գէպերը, զորս միամի կը տեղեկագրեմք:

—Տէվրէշի տղայք անուն և Համիտիյէ հեծելագունդին պատկանող քանի քրդեր՝ 30 զինեալ ընկերներով, լոյս ցերեկով կը յարձակին Զիֆթլիկ գիւղի վրայ, պահանջելով գիւղացիներէ այն երիտասարդը, որ 3 տարի առաջ թրացած և մօտերս գարձեալ եկած է: Հայ եկեղեցւոյ գիւղը, բայց իւր կեանքի ապահովութեան համար, 3 ամիս առաջ ծպտեալ Բասեն մեկնած է: Գիւղացիք եղելութիւնը իր ձշութեամբ կը պատմեն, բայց զարդացած գազանները կը վիրաւորեն 20-ի մօտ հայեր, որոնցմէ ումանք ծանր վիճակ ունին ու կը մէկնին, ի լիս իմացանք, որ վիրաւորք կարին բողոքելու գացած են. արդինքը դեռ չգիտենք:

—Առ էք գիւղացի 2 հայեր, իրենց 2 ջորիները ել պէկու գետեզը արածած ատեն, Միատուն ըսւած գոմերը բնակող բնիկ գասապայցի թուրդերու կը հանդիպին, որը երկու ջորին գետին ամենէ վտանգաւոր հոսանութը կը ձգեն, տերերուն ալ խիստ կը գանա-

կոծեն. մի ընկեր գլուխ երես արիւնլւայ վիճակի մէջ քաղաք եկաւ և բողոքեց առաջնորդ հօր. մարդ զըրկւեցաւ միւս ընկերոջ ետևէն, պատգարակով բերին:

— Խուբսի մէջ հարստահարութիւն. — Մասըդանցի 18 զննեալ քուրդեր գիւղ եկան՝ իրենց Միրդ Ալիի տըզուն Աղա Սիւլյամանի հետ. Տիլակերեաներու վլրայ, Մըրձօյեաններու և Էլեսիկեաններու տանեցւոց վրայ ալլուտանք, ծեծ, բռնութիւններ ի գործ դրին. բայց վերջապէս ժամանակիս դէպքեր զերենք վհատեցուցին, լյս ցերեկով թալանի սկսիլ, շատ մը սպառնալիքներ ընելով մեկնեցան ի Սերկեիլ գիւղ, ուր նոյն դիւղի Արտանեան Կարապետի ծառաստանէն 150 բարդի ծառեր կեղեւլով, 2 հրացանի գնդակ գուռը իրեցին և տան դրան առջև մի տաճիկ գերեզման կապելով, մեկնեցան:

— Թալան ի Կաղկեւելնի. Գիւղիս բնակիչներէն Պաղտոյեան Փիլիպպոս անուն մէկը Բալուէն ապրանք առնելով դարձած ատեն, 6 զննեալ քրդերէ կը պաշարւի Կազ նահիւէի մէջ. տղան փախչելով կազատւի. 1000 լ. ապրանք տարին: Սոյն դէպքի գրդիչն ու հեղինակը Կազի Միւտիր՝ Ուլաշ-զատէ Սալլ Մէտ աղայի տղայ Քիւչիկ աղան է: Կառավարութեան դիմեցաւ, բայց անօգուտ և անլսելի. Այժմ տեղույս կառավարութիւնը „արզուհայի“ իսկ ունինդրութիւն չընէր, երբ բողոքը թալանի և հարստահարութեան դէմ է: Գաւառիս ընդհանուր վիճակ անապահով է և թատր մը սոյն գունակ դէպքերու:

— Բահրի փաշան պաշտօնանկ եղաւ, կորսւեցաւ, ուտելով շատ հայերի դրամները:



ՄԱՏԷՆԻՑ. Ճիշտ այս պահուս վստահելի աղբիւրէն կիմանանք, թէ 10-15 օր առաջ Մարզւանի հրդեհը պատահած օրը տեղույն քաջալերւած մատնիչներէն համար մեռած գտնւած է՝ ի մեծ վարձատրութիւն կամ յապաշխարութիւն իւր վատ ջանց և ի սարսափ իւր նմանեաց: Գործադիր ահաբեկիչները ազատ ու ապահով են: Ասիկա 8-երորդ անգամ է, որ մարզւանցիք իրենց մատնիչները սպանած են՝ 6-ը հրապարակաւ և 2-ը գաղտնի:

* *

Եւրոպական մամուլը, նոյն իսկ անգլիականը, Ա. Պոլսի վերջին դէպքի առմիւ վերին աստիճանի կծու ու յարձակողական դիրք բռնեց դէպի հայկական ինդիրը և դէպի հայերը մասնաւորապէս, և նա այն աստիճան հեռու գնաց, որ սկսեց Սասունի կոտորածն անգամ կասկածանքի ենթարկել: Այս անսպասելի փոփոխութիւնը մի մեծ հանելով էր գարձել շատերի համար, նամանաւանդ որ Անգլիական նաւերը մօաեցել էին Դարդանելին և նաւային ցոյց էր սպասւում. ահա ուր էր հասել դիպլոմատիկական յարաբերութիւնը այդ ժամանակամիջոցում: Բայց և այնպէս դիպլոմատիան ու նրա օրգանները պարտք համարեցին դատապարտել հայերին և Տաճկահայաստանում տեղի ունեցած բոլոր կոտորածները համարել հայերի սարքածը՝ Եւրոպային զբաղեցնելու՝ իրենց իսկական շահերին ծառայեցնելու դիտումնից: Եւ այս ասուները մի քանի ժամանակ, նոյն իսկ մի քանի օր առաջ սպառնալիքներ էին տալիս սուլթանի կառավարութեանը, նրա կատարած ամեն տեսակ ոճրագործութիւնների համար: Ոչ ժամանակներ, ոչ մարդիկ:

Մենք կը վերագառնանք այս ինդիրին:

* *

Թէկ „Դրօշակի“ 15-16 համարները հրատարակում ենք միասին, բայց և այնպէս հետևեալ 17-րդ համարը լյս կը տեսնի իւր ժամանակին՝ նոյեմբ. 1-ին:

* *

Ներկայ 15-րդ և 16-րդ համարները մամուլին յանձնելու բոպէին ստացանք Դաշնակցութեան Կ. Պոլսի Կենտրոնական Կամուկէի հրատարակած պրօկլամացիան, որ և զետեղում ենք ստորև:

Մանրամասնութիւնները և այլ տեղեկութիւնները հետևեալ համարում:

—

Թ Ի Ո Ւ Ց Ի Կ Թ Ե Ր Թ

Հ. Յ. Դ Ա Շ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

№ 1

Հ.

Գ Ո Լ Ս Ի

№ 1

24 Մեպ. 95

24 Մեպ. 95

Կ Ե Ր Պ Ո Ւ Ա Կ Ա Ա Ն Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հայ եղբայրներ եւ Քոյրեր,

Հայութիւնը ճգնաժամի մէջ է:

Հնչակեաններուն ձեռքով կազմակերպուած Սեպտեմբեր
18-ի խաղաղ Ցոյցը, որով կուգէնն Մայր-Հայրենիքի ա-
հեղապէս անսունելի վիճակը վերջին անդամ հաւաքաբար
պարզել թուրք կառավարութեան եւ Եւրոպայի առջեւ,—
այդ ցոյցը կուսորածի եւ անմիտ ու գազանային վրէժիւն-
դրութիւն ասիթ մը եղաւ թուրք բռնապետութեան հա-
մար. ոստիկանութիւնը ինքն էր որ զինեց ու գրգռեց հայե-
րուն դէմ մայրաքաղաքիս սօֆթաներն ու թուրք խուժանը:

Ա՛լ համբերութեան չափն ու սահմանն անցած է. երբ
կառավարութիւն մը կը խարէ մեզ ու Եւրոպան աւելի
քան տասնվիշց տարիէ ի վեր, երբ կառավարութիւն մը լըր-
րաբար կուրանայ Սասունի ջարդը եւ կը խաղցնէ կուրո-
պան տասներեք ամիս անընդհատ, երբ կառավարութիւն
մը նոր Սասուններ կ'առեղծէ Երզնկայի, Կամալի, Շապին
—Գարահիսարի եւ Հայաստանի բոլոր անկիւններուն մէջ
եւ նոյնիսկ Պօլսի մէջ Եւրոպայի աչքին առջեւ բնաջին ընել
կը ջանայ իր տարրական իրաւունքները պահանջող ժողո-
վուրդ մը—ալ ինչ կ'ապահէք այդպիսի կառավարութեանէ
մը: Ո՛չ, ալ անցաւ խոստունքի ժամանակը, ալ չը խար-
ուինք մենք ոին խոստուններով եւ անարքէք թղթերով
իրական գործ մը պէտք է մեզ. ապահովութեան եւրոպա-
կան երաշխիք մը թուրքերուն հայակրծան սխակէմին դէմ:
Թո՞ղ գուրք չանցնի հերոսներուն եւ Պօլսի փողոցներուն
մէջ ինկած անմեղ զոներուն արիւնք, զոհեր որոնց զիակ-
ները Մարմարայի խորերէն բողոք ու վրէժ կը պահանջնի:

Զը խարսխնք խոստուններէն, մինչեւ որ մեր պահանջ-
ներուն Եւրոպական պետութիւններու կողմէն գոհացում
չ'արուի, խսախ. կը հրամայենք որ ամեն մարդ գոյէ իր
խանութը, ոչ ոք ելլայ իր պատսպարանէն, ոչ ոք իր
զէնքը վարդնէ, որովհետեւ նորանոր ջարգերու պատրա-
ստութիւններ կը տեմնուին թուրք խուժանին մէջ, որուն
դէմ կառավարութիւնը, եթէ ուղէ խակ՝ որ յիմարութիւն է
հաւոալ՝ անզօր է մեզ պաշտպանելու:

Եղբայրներ եւ Քոյրեր:

Հասած է վարկեանը, երբ պիտի պապացուցանէք, որ լա-
ւագոյն կը համարիք վիւցազնաբար մեռնիլ քան վատա-
բար վիճանալ Մոնղոլիոյ անապատներէն իախած մարդա-
կերպ գազաններուն ճիրաններուն մէջ:

ՄԱՌ կամ ԿԵՍՆՔ:

Վայ անոր որ չաջակցիր յեղափոխական բանակին:

Կեցցէ՛ Յեղափոխութիւն:

Դաշնակցութեան կարնոյ կենտրոնական կօմիտէն
լուր առնելով Շաքիր փաշայի հայաստան գալու մա-
սին, պրոկամացիաները հրատարակելով վազորօք ցրել
է գաւառները, որ „Հայաստանի այդ Բարենորոգիշ-իօ-
միսարին“ ընդունեն ըստ արժանութեան:

* *

Բուրգասի Ապբանազեան, Ռուշուկի Հայկական
Միութիւն, Խամպօլի Սասուննեան և Սլիվնայի Օժան-
դակ՝ ընկերութիւնները խնդրում են յայնեւ որ ի-
րենք միանալով Հայ Յեղ Դաշնակցութեան հետ, կազ-
մում են առանձին առանձին կօմիտէներ:

* *

Տեղի խիստ սղութեան պատճառով Սասունի կոտո-
րածի վերաբերեալ պաշտօնական գոկումէնները և ա-
ղերաբարերը անկարող լինելով զետեղել Դրօշակի էջերում,
մենք նրանցից կարեսները կը հրատարակենք
առանձին գրքոյկով:

ՆԻՐԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հայ Յեղ Դաշնակցութեան կեղուն, սնդուկի մէջ
ստացեցան:

Թալրիզէն Հայկ 30 թուման, Հաւատացրդ 10 սոկի,
Զաւայէն՝ Հով 25 անդլ սոկի, Արմաւիր՝ Վարդան Դեր-
ձակեանէն 5 սոկի, Բաղդադ՝ 50 ֆրանկ, Արմեոլ մը
30 ֆր., Պուշկի՝ Ռոստոմ Շաւարչ 20 ֆր. և 460 ֆր.:
Նիզակ քաղ. սնդուկի մէջ ստացեցան:

Ցչ 40 դահեկան, Ցո. 60 դհ., Կ. Խ. 50 դհ., Կ. Հ.
50 դհ., Խ. Հ. 40 դհ., Ս. Դ. 40 դհ., Գ. Ձ. 40 դհ.,
Մ. Ժ. 50 դհ., Ս. Ա. 50 դհ., Հ. Ա. 40 դհ., Գ. Ա. 40 դհ.,
Ա. Ա. 10 դհ., Գ. Ա. 50 դհ., Գ. Ա. 50 դհ.,
Պ. Մ. 60 դհ., Գ. Հ. 30 դհ., Ս. Հ. 30 դհ., Ա. Հ. 20 դհ.,
Պ. Խ. 10 դհ., Գ. Խ. 10 դհ., Խ. Ա. 60 դհ., Ա. Ձ.
40 դհ., Ս. Ի. 20 դհ., Մ. Թ. 20 դհ., Ս. Գ. 20 դհ.,
Մ. Թոր. 20 դհ., Ց. Տ. 20 դհ., Ա. Ա. 10 դհ., Ա.
Պ. 40 դհ., Մ. Կ. 10 դհ., Ս. Տ. 8. 6. 40 դհ., Թ. Գ. 10 դհ.,
Օ. Փ. և Մ. Վ. Վ. 300 դհ., Գ. Մ. Մ. 95 դհ.,
Անվախ խմբից 200 դհ., Միութիւնից 100 դհ..

Շվ. Ժ. Օ. Օ. Ե. 13 ֆր., Ա. Վ. 6 ֆր., Ա. Վ. Գ.
5 ֆր.:

Ամերիկ. Լովէլ Ք.-Ից՝ Ց. Ճ. 1 դոլար:
Վահպակ.

Անշեալ Անուման տպաւած՝ Վեհանձն 100 սու-
սկինի տեղ պէտք է լինէր՝ Վեհանձն 100 բութի:

Մեր կօմիտէների, Ժանօթների և ընդհանրապէս մեզ
դիմողների առանձին ուշադրութիւնն ենք հրակրում
ու հասցէի վայ:

Դաշնակցութեան անծանօթներից խնդրում է թղթակցութեան
և նիրատրութեան համար զիմնել:

Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 45, Augustus Rd, Hammersmith, W. London.

Վեհանձն, Դաշնակցութեան ազատ տպարան